

Հայաստանի Հանրապետության փոխ վարչապետ Տիգրան Ասինեան հանդիպեցաւ Գանատայի հայ համայնքին հետ



Կարդալ էջ 3

Արիս Պապիկեան Օնթարիոյի Խորհրդարանի անդամ ընտրուեցաւ




Յունիս 7-ին կայացած Գանատայի Օնթարիո նահանգի Օրէնսդիր ժողովի ընտրութիւններու իր թեկնածութիւնը առաջադրած Արիս Պապիկեան, Ազատական քուէներու ջախջախիչ մեծամասնութեամբ ընտրուեցաւ Օնթարիոյի խորհրդարանի առաջին Գանատցայ երեսփոխանը :

Յառաջդիմական-Պահպանողական կուսակցութեան անդամ Արիս Պապիկեան չորս տարի վարած է Օթթաուայի Հայ Դատի գրասենեակի վարիչ-տնօրէնի պաշտօնը: 2009 թուականին, Գանատայի կառավարութեան քաղաքացիութեան ու ներգաղթի նախարար ձէյսըն Քէնիի կողմէ նշանակուած է քաղաքացիութեան դատաւոր:

Հայաստանի Ափիւռքի նախարարութեան կողմէ արժանացած է ոսկէ մետալի, Գանատայի Հիմնադրութեան 125-ամեակին առիթով արժանացած է Մեծն Բրիտանիոյ Թագուհիի գնահատական շքանշանին:

Ուաշինկթընի մէջ տեղի ունեցաւ Ամերիկայի մօտ Հայաստանի առաջին դեսպան Արմէն Գարոյի կիսանդրիի բացման արարողութիւնը



Յունիս 29-ին նախագահ Արմէն Սարգսեան մասնակցեցաւ Ուաշինկթընի մէջ Հայաստանի առաջին դեսպան Արմէն Գարոյի կիսանդրիի բացման արարողութեան: 1918-1920 թուականներուն Միացեալ Նահանգներու մէջ Հայաստանը ներկայացնող առաջին դեսպանին կիսանդրին տեղադրուեցաւ Հայաստանի դեսպանատան բակը:

Կարդալ էջ 5



HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4

514 327-7777
www.hondagabriel.com

Kevoak Asadourian
Vahan Vartanian
Haig Khobassarian



MARCHÉ
ADONIS

Un univers de fraîcheur



Donnez une touche
méditerranéenne
à vos BBQ en famille !

*Give a mediterranean touch
to your BBQ with the family!*

www.groupeadonis.ca

Suivez-nous



Հայաստանի Հանրապետության փոխ վարչապետ Տիգրան Արինյանի հանդիպեցաւ Գանատայի հայ համայնքին հետ

Երեքշաբթի, 26 Յունիսին, Թորոնթոյի հայ համայնքը հիւրընկալեց Հայաստանի Հանրապետութեան փոխ վարչապետ Տիգրան Արինյանը եւ իրեն ընկերացող պետական պատուիրակութիւնը: Փոխ վարչապետի այցելութիւնը կը նպատակադրէր ամրապնդել Հայաստան-Սփիւռք փոխադարձ վստահութիւնը եւ շահաբեր ներդրումներու հնարաւորութիւններու առիթը ստեղծել սփիւռքի գործատէրերուն: Պատուիրակութեան մաս կը կազմէին փոխարտուցութեան եւ տեղեկատուական գիտարուեստի փոխ նախարար Յակոբ Արշակեանը, Սփիւռքի փոխ նախարար Բարգէն Տէր Գրիգորեանը, ՀՀ փոխ վարչապետի գրասենեակի ղեկավար Սերժ Վարազ Միսեռեանը, փոխ վարչապետի օգնական Վիքթորիա Այսինեանը, տնտեսական զարգացման եւ ներդրումներու փոխ նախարար Մանէ Ադամեանը, Bussiness Armenia-ի ներկայացուցիչներ՝ Ալինա Եղիազարեանը եւ Նարեկ Ալեքսանեանը:

Օրուան ընթացքին փոխ վարչապետն ու պատուիրակութեան անդամները զանազան հանդիպումներ ունեցան Թորոնթոյի մէջ: Գանատահայ Գործարարներու խորհուրդի (Canadian Armenian Business Council — CABC), Համահայկական առեւտրային ցանցի (ATN Global Armenian Chamber of Commerce) եւ Bussiness Armenia-ի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ

ճաշկերոյթ մը, Lara's ճաշարանէն ներս, ուր գանատահայ գործարարներուն ներկայացուցեցաւ նոր իշխանութեանց քաղաքական ծրագիրն ու գործընթացը, Սփիւռքի հետ համագործակցութեան հնարաւոր ձեւաչափերը եւ Հայաստանի մէջ շահաբեր ներդրումներու առիթները: Երեկոյան, Թորոնթոյի Հայ կեդրոնին մէջ կայացաւ ժողովրդային հաւաք, որուն ընթացքին իր պատգամը փոխանցեց փոխ վարչապետը:

Հանդիպումներ սկիզբը թորոնթոյի անունով խօսք առաւ Յակոբ Ճանպարհեանը, որ շեշտեց, թէ Հայ ժողովուրդը տակաւին հսկայական ճանապարհ ունի կտրելիք, եւ թէ Հայաստանի եւ Արցախի միջոց պետականութեանց հզօրացումը կը մնայ ազգային գերխնդիր: Ապա բեմ հրաւիրուեցան փոխ վարչապետն ու Սփիւռքի փոխ նախարար Բարգէն Տէր Գրիգորեանը: Փոխ վարչապետը լայնօրէն անդրադարձաւ նոր կառավարութեան գործընթացին եւ աշխատելու շեշտելով իրաւունքի գերակայութեան եւ օրէնքի առջեւ բոլորին հաւասարութեան վրայ հիմնուած ազգային միասնութիւնը եւ քաղաքացիական համերաշխութեան անհրաժեշտութիւնը: Փոխ վարչապետը շեշտեց Սփիւռքի կարեւոր դերը նոր Հայաստանի հզօրացման աշխատանքին մէջ: Ան յատկապէս կարեւոր նկատեց Հայաստան-Սփիւռք փոխադարձ վստահութեան վերականգնումը

մը եւ Հայաստանի մէջ տիրող մենաշնորհային դրութեան ձեւաչափերը: Ան յայտնեց նաեւ, որ նոր իշխանութիւնը բարձրօրէն կ'արժեւորէ Սփիւռքի մասնակցութիւնը ժողովրդավար Հայրենիքի կերտման աշխատանքին մէջ եւ կ'ակնկալէ Սփիւռքի մասնակցութիւնը ոչ միայն բարեգործական նուիրատուութիւններով, այլեւ՝ գիտական եւ մարդկային ներուժով, ինչպէս նաեւ կը քաջալերէ ներդրումներ կատարել գիտատնտեսութեան, գիտարուեստի եւ ենթակառուցվածքի հզօրացման ոլորտներէն ներս:

Ապա հանրութեան հետ քննարկուեցան զանազան հարցեր, որոնցմէ են՝ երկրաշարժային ռիսկերի գինապարտութեան օրէնքը, հակամենաշնորհային դրութիւն ստեղծելու աշխատանքները, Եւրոմիութեան հետ կապեր ամրապնդելու գործընթացը: Փոխ վարչապետն ու փոխ նախարարները թափանցիկ մօտեցումով պատասխանեցին ուղղուած հարցումներուն: Փոխ վարչապետը յստակացուց նաեւ, որ Հայաստանի մէջ ներդրումներ կատարելու համար, գանատահայերը կրնան դիմել Bussiness Armenia-ին:

Տեղին է յիշել, որ Արամ Մանուկեանի յուշարձանի տեղադրման աշխատանքները յետաձգելու առնչութեամբ շրջանառութիւն ընող տեղեկութիւններուն մասին հարցումի մը պատասխանելով՝ փոխ վարչապետը վստահացուց, թէ հարցը քաղաքական ոչ մէկ բնոյթ ունի,

եւ Արամ Մանուկեանի յուշարձանը անպայման պիտի տեղադրուի:

Հանդիպումներ աւարտին, «Հորիզոն» առիթ ունեցաւ առանձնազրոյց ունենալու Սփիւռքի փոխ նախարար Բարգէն Տէր Գրիգորեանին հետ, որ յայտնեց, թէ նախարարութեան առաջնահերթութիւնն է նոր տեսլական եւ ռազմավարութիւն ստեղծել՝ հիմնական թիրախ ունենալով Հայաստանում ու Հայրենադարձութիւնը եւ Սփիւռքի մասնագիտական ներուժը լաւագոյն օգտագործել ի նպաստ Հայաստանի:

Թորոնթոյի այցելութեան ծիրէն ներս, փոխ վարչապետի պատուիրակութիւնը առիթ ունեցաւ նաեւ հանդիպելու Թորոնթոյի քաղաքապետ Ճոն Թորրիի հետ, որուն հետ քննարկուեցաւ յառաջիկային քաղաքապետին Հայաստան այցելելու կարելիութիւնը: Քաղաքապետ Ճոն Թորրին պատրաստակամութիւն յայտնեց 2019-ին գանատացի գործարարներու խումբով Հայաստան այցելելու:

Հայկական պատուիրակութիւնը այցելեց նաեւ Գանատայի երկրորդ ամենամեծ էլեկտրական սարքեր արտադրող Rex Power Magnetics ընկերութեան կեդրոնը, որ մասնաճիւղ ունի Հայաստանի մէջ: Քննարկուեցան Հայաստանեան մասնաճիւղը ընդարձակելու հնարաւորութիւնները:

Սարին Փոլատեան Արիկեան

Voyages **HAIG** Travel

Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ **(514) 284-7676**

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼԱԲԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

Մարտ 5-էն սկսեալ, «Հայ Հորիզոն» հեռատեսիլի յայտագիրը պիտի սփռուի հետեւեալ կայաններուն եւ ժամերուն, մէկ ժամուայ տեւողութեամբ:

Videotron:
HD838 կամ SD238

Bell Fibe:
HD1216 կամ SD216

Երեքշաբթի - երեկ ժամը 9:00-ին (առաջին ամիսում)
Չորեքշաբթի - կ.է. ժամը 2:00-ին
Հինգշաբթի - երեկ ժամը 6:00-ին եւ տոմարուան ժամը 12:30-ին
Շաբաթ - առ. ժամը 7:00-ին եւ երեկ ժամը 11:00-ին
Կիրակի - առ. ժամը 6:00-ին, կ.է. ժամը 4:00-ին եւ առ. ժամը 1:00-ին
Երկուշաբթի - առ. ժամը 6:00-ին, կ.է. ժամը 5:00-ին եւ առ. ժամը 1:00-ին

Ուղիղ արձակում www.icitelevision.ca

Ghadir Meat & Restaurant

Ghadir Meat & Restaurant

T. 416-750-7404
T. 416-750-7400
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4
E-mail: info@ghadirmeatmarket.com

BAKERY AND FINE FOODS

OPEN 7 DAYS A WEEK!
WEEKDAYS 9am - 7pm
SATURDAY 8AM - 6PM
SUNDAY 8AM - 5PM

LOCATION: 2094 LAWRENCE AVENUE EAST
ON THE NORTH-EAST CORNER OF LAWRENCE AND WARDEN

Noor Fine Food™
Gourmet Mediterranean Cuisine

1 High Meadow Place, Unit 9
Toronto, Ontario M9L 2Z5

Tel 416 745 3111
Fax 416 745 9337

ANI Ristorante

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

Sutton

Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1200 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0

Annie Varbedian
Sales Representative

Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9367
annievarbed@hotmial.com
www.suttongroupadmiral.com

hearing aid source

Andre Ayvazyan HIS B.A.S.

andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

TASTE OF ALEPPO

Crown Pastries
Fine Middle Eastern Pastries

2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)
Toronto ON, M1R 2Z5
Tel 647.351.2015
www.crownpastriesbaklava.com

I.D.A.

Part of the **Accord** family of pharmacies.

Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian

Cassandra Pharmacy Inc.

2040 Victoria Park Ave.
Toronto, Ontario
M1R 1V2

Tel. : 416.449.2040
Fax: 416.449.2048

ANI BAKERY
ԱՆԻ ՓՈՒՊՈՒՆ

Middle Eastern Pizza
Lahmajoun

ARSEN DABBAGHIAN

25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8
Tel: 416.285.7164

ՀՀ 100-ամեակին առթիվ ՀՕՄ-ի «Ռուբինա» մասնաճյուղի ձեռնարկ ՀՕՄ-ի եւ հայ կնոջ դերը Հայաստանի Ա. Հանրապետության շրջանին

Հայ Օգնութեան Միութեան Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճյուղի Դաստիարակչական յանձնախումբը, Հայոց պետականութեան վերականգման 100-ամեակին առթիւ, իր տեսակին մէջ բացառիկ Հանդիսութիւն մը կազմակերպած էր՝ «ՀՕՄ-ի եւ Հայ կնոջ դերը Հայաստանի Ա. Հանրապետութեան շրջանին» թեմայով: Չեռնարկը տեղի ունեցաւ 8 Յունիսի երեկոյեան, Հայ կեդրոնի սրահին մէջ, ներկայութեամբ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր ներկայացուցիչ Տէր Կոմիտաս Ա. Քահանայ Փանոսեանի, ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչ ընկրհ. Վարսենիկ Սարգիսեանի, ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան ներկայացուցիչներ՝ Սիլվի Օճանեանի եւ Նաթալի Մանուկեանի, Հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներու եւ շուրջ երկու հարիւր հանդիսատեսներու:

Սրահին բեմին մէկ կողմը յարգարուած էր 20-րդ դարու սկիզբի Հայկական տունը ներկայացնող կահաւորումով, իսկ բեմին կեդրոնը՝ Հայաստանի Խորհրդարանի գրասենեակի մը խորհրդանշական տեսարանով: Բեմի կողքին եռոտանի վրայ գետեղուած էին 20-րդ դարասկիզբի ազգային յեղափոխական գործիչ-հերոսներու եւ բարեգործութեան նուիրուած շարք մը Հայ կիներու նկարները:

Հանդիսութիւնը սկսաւ Հայաստանի եւ ՀՕՄ-ի քայքայներով: Օրուան Հանդիսավար Զեփիւռ Տորնան բարի գալուստ մաղթելէ ետք, բացման խօսքին մէջ ըսաւ. «Հայ կինը եւ Հայ մայրը շնորհիւ իր անձնագոհութեան, նուիրուածութեան, ամուսնական հաւատարմութեան եւ իր մաքուր բարոյականով նկատուած է լոյսի սրբութեան մարմնացումը: Հայ կինը հեթանոսական ժամանակներէն սկսեալ մինչեւ մեր օրերը կենսական դեր կատարած է Հայ ազգի պատմութեան մէջ: Տրդատ թագաւորի կինը՝ Աշխէն թագուհին եւ քոյրը՝ Խորոյր-Պոլիստը, Տրդատ թագաւորին հետ, նահատակուած Հռիփսիմէ եւ Գայիանէ կոյսերուն վկայարանները իրենց ձեռքերով շինած են:

Ազնուական կիներ, ինչպէս՝ Շուշան Պահլաւունի իշխանուհին, Կիլիկիոյ Զապէլ թագուհին, վանքեր ու հիւանդանոցներ շինել տուած են եւ պալատական կեանքը ձգելով՝ որբեր ու հիւանդներ խնամած են:

Հայ կինը գիտցած է հերոսանալ եւ հերոսներ պատրաստել: Գարեգին Նժդեհ ըսած է «Մայրերի ակի մէջ պիտի փնտուել ազգերի ճակատագիրը»: Հայ ժողովուրդի տառապալից տարիներուն Հայ կինը խումբեր կազմած է Արեւմտահայաստանի, մինչեւ իսկ Ամերիկայի կարգ մը քաղաքներուն մէջ, որպէսզի օգնութեան հասնի ժողովուրդի նիւթական եւ խնամատարական կարիքներուն: 1910-ին, արդէն գոյութիւն ունեցող խումբերը միացած եւ կազմակերպուած են ու հիմնած են ՀՅԴ Կարմիր Խաչը. այդ օրերէն սկսեալ ՀՕՄ-ի



նպատակը եղած է հասնիլ Հայ ժողովուրդի կարիքներուն եւ նոր սերունդները հայ պահել՝ անոնց տալով հայեցի դաստիարակութիւն»:

Բացման խօսքէն ետք պատկերիզի վրայ ցուցադրուեցաւ ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան նախկին ներկայացուցիչ, երկարամեայ վաստակ ունեցող Սեդա Խորշեանի սրտի խօսքը, որուն ընթացքին ան դրուատեց ՀՕՄ-ի գործունէութիւնը, ի մասնաւորի առաջին 20 տարիներուն, 1910-էն 1930-ի ընթացքին, երբ Հայկական կ'ապրէր դժնդակ տարիներ եւ սակայն կը կերտէր անկախ Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը:

Երկրորդ պատկերիզով մը ցուցադրուեցաւ Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի վեցերորդ գումարման պատգամաւոր Թուզան Առաքելեանի սրտի խօսքը: Ան իր խօսքին մէջ նշեց Հայ կնոջ դերը Հայաստանի պետականութեան վերականգնման ընթացքին, շեշտելով որ այն թուականին երբ քաղաքակիրթ շատ մը պետութիւններու մէջ կիները քուէարկելու իրաւունք իսկ չունէին, Հայաստանի մէջ կիներ ո՛չ միայն կը քուէարկէր, այլ նաեւ ազգային խորհրդարանի անդամ կ'ընտրուէին երբեք անձուէր կիներ:

Գեղարուեստական յայտագրին մասնակցեցաւ Լեւոն Գարակիւլեանը, որ ջինջ ու հմայիչ ձայնով երգեց, օրուան նիւթին համեմատ պատշաճօրէն ընտրուած՝ Ալեքսէյ Հեքիմեանի «Հայոց կանայք»ը, որուն դաշնակի վրայ ընկերակցեցաւ Թայրին Գլըպոզեանը: Հայրենիքի Կիւմրի քաղաքէն վերջերս Թորոնթո ժամանած Վահան Ուռուգեան տուտուկի վրայ վարպետութեամբ նուագեց Սայաթ Նովայի «Քամանչա»ն եւ Գուսան Շերամի «Մէջու կեանք չմնաց»ը:

Գարսիկիզի շրջանին ազգային, քաղաքական եւ հասարակական գործունէութեամբ յայտնի հայուհիներէն խումբ մը ընտրուած էր հանդիսատեսներուն

ներկայացնելու համար: Տիպարները ներկայացնող անձերը բոլորն ալ կրցած էին մարմնաւորել իրենց ներկայացուցած տիպարը եւ հարազատ զգացումներով ներկայացնել զանոնք:

Առաջին հերթին Կիլտա Քէպպապեանը ներկայացուց ազգային հերոսուհի, անվախ յեղափոխական՝ Թուրքիան Արէշեան Օհանջանեանը: Լուսին Մանկասարեան ներկայացուց Թոստոմ Զօրեանի տիկինը՝ վաստակաւոր կրթական եւ հասարակական մշակ եղիսարէթ Մելիք-Շահնազարեան Զօրեանը: Զանի Շահինեան ներկայացուց իսկական ճիւղարժ ֆետայի եւ հետագային Լիբանանի Օգնութեան Խաչի գործիչ՝ Հռիփսիմէ Լույս Մեծատուրեան Սասունին:

Ա. Հանրապետութեան խորհրդարանի երեք կին անդամները հանդիսատեսներուն ներկայացան բեմին վրայ սեղանի շուրջ նստած: Անոնցմէ Պերճուհի Պարտիզպանեան-Բարսեղեան, որ մանկավարժ եւ գրագիրուհի էր, ներկայացուց տոբթ. Անի Հասարեանը: Վառվառէ (Վառեա) Սահակեանը, խորհրդարանի նախագահ Աւետիք Սահակեանի կինն էր եւ կրթական յանձնախումբի անդամ, զայն ներկայացուց Մարալ Հրեշտակեանը: Արամ Մանուկեանի կինը՝ Բոլորիսի Կատարինէ Չալեան Մանուկեան, որ հակառակ բացառիկ դժուարութեանց, ապրեցաւ հայրենիքին մէջ՝ չհեռանալու համար իր ամուսնոյն շրջիմէն. զայն ներկայացուց Արմինէ Թորիկեանը: Վերջին տիպարը, Հայաստանի Հանրապետութեան Ճարտնի դեսպան եւ միջազգային առումով առաջին քաղաքական կին ներկայացուցիչ, Տիանա Աղաբեկ Աբգարն էր, գոր ներկայացուց Թողա Տէր Յարութիւնեանը: Ապա Տէր Կոմիտաս Ա. Քահանայի խօսք առաւ եւ «Պահպանիչ»ով փակեց հանդիսութիւնը:

Զեփիւռ Տորնա

CIBC Aline Shnorhokian Mortgage Advisor Tel: 1 866 231-8876 Fax: 450 688-7555 Cell: 514 797-1375 aline.shnorhokian@cibc.com

Albert Arkilianian Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker aarkilianian@sutton.com Cell: 514.962.8822

Nissan Gabriel VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS Kevork Asadourian Directeur des ventes - usagé Sales Manager - Pre-Owned

École De Conduite AZIG Driving School Tel: 514-336-1110

Natalie Skaff, CPA, CGA Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant nat.skaff@gmail.com

NAZARETH CLASSIC GRILL 550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6 Tel: 450.937.4064

SAMUEL TOPALIAN 450 682-1644 AUTO SAMSON MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE SERVICE DE PNEUS MISE AU POINT 4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.

RE/MAX Hayk Hartounian Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker C 514.574.6162 B 514.333.3000

NETTOYEUR MARIE-CLAIRE CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL) 2535 de Salaberry, Montréal Tél: 514.334.7830

Ուաշինգթոնի մէջ տեղի ունեցաւ Ամերիկայի մօտ Հայաստանի առաջին դեսպան Արմէն Գարոյի կիսանդրիի բացման արարողութիւնը

Յունիս 29-ին նախագահ Արմէն Սարգսեան մասնակցեցաւ Ուաշինգթոնի մէջ Հայաստանի առաջին դեսպան Արմէն Գարոյի կիսանդրիի բացման արարողութեան: 1918-1920 թուականներուն Միացեալ Նահանգներու մէջ Հայաստանը ներկայացնող առաջին դեսպանին կիսանդրին տեղադրուեցաւ Հայաստանի դեսպանատան բակը:

Արմէն Գարո, բուն անունով՝ Գարեգին Փաստրմաճեան, ծնած է Փետրուար 9, 1872-ին Կարին: 1891-ին Կարնոյ Սանասարեան վարժարանը աւարտելէ ետք, կը մեկնի Ֆրանսայի Նանսի քաղաքի Համալսարանը, երկրագործութեան ճիւղին հետեւելու, որոշելով ապագային վերագառնալ եւ նուիրուել հայ գիւղացիի զարգացման եւ յառաջդիմութեան:

1896-ին մուտք կը գործէ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան շարքերը, եւ նոյն տարին իսկ իր գործօն մասնակցութիւնը կը բերէ Պանք Օթթոմանի գրաւումին, ուր Բարզէն Սիւնիի նահատակութենէն ետք կը ստանձնէ դեկավարի դեր եւ յաջողութեամբ գլուխ կը հանէ գործը:

1905-ի հայ-թաթարական կռիւներու մէջ, իրեն կը յանձնուի Թիֆլիսի հայութեան ինքնապաշտպանութեան գործի ղեկավարութիւնը: Օսմանեան Սահմանադրութենէն ետք կը վերագառնալ իր ծննդավայրը՝ Կարին, ուր կ'ընտրուի օսմանեան խորհրդարանի անդամ: Առաջին աշխարհամարտին կ'անցնի Կովկաս եւ կը մասնակցի կամաւորական գունդերու կազմակերպման աշխատանքին եւ կովկասեան ճակատին կռիւներուն, իբրեւ կամաւորական Բ. գունդի հրամանատար Դրոյի օգնական եւ ապա անոր վիրաւորուելէն ետք իբրեւ հրամանատար:

1918-ին Հայաստանի անկախութենէն ետք կ'ընտրուի անդամ՝ Փարիզի Ազգային Պատուիրակութեան, ապա կը նշանակուի Ուաշինգթոնի մօտ անկախ Հայաստանի դեսպան:

Ան անխոնջ կերպով աշխատելով յաջողեցաւ նիւթական հսկայական օժանդակութիւն հայթաղելու հայ գաղթականներուն եւ հայկական բանակի կարիքներուն: Իր ջանքերով Ամերիկա պաշտօնապէս ճանչցաւ անկախ Հայաստանի հանրապետութիւնը: Յաւիտենապէս աչքերը փակեց Մարտ 23, 1923-ին, ժընեւի մէջ, իբրեւ վերջին բաղձանք ունենալով թաղուել իր սիրելի Հայաստանի հողին վրայ, որուն համար ան նուիրած էր իր ամբողջ կեանքը:

Հանդիսութեան խօսք առաւ ՀՅԴ Բիւրոյի անդամ Յակոբ Տէր Խաչատրեան եւ ըսաւ. «ՀՅԴ-ի կողմէ շնորհակալութիւն կը յայտնեմ պրն. դեսպանին, որ այս ծրագրի առաջարկը որդեգրելով առիթը ընձեռնեց, որ միասնաբար աշխատինք մնալուն խորհրդանիշ մը կանգնեցնելու ՀՀ դեսպանատան առջև հայկական հողի վրայ: Եւ որքան յատկանշական է, որ այդ խորհրդանիշը ահաւասիկ կը մարմնաւորուի արձանովը Արմէն Գարոյի, որ ՀՀ առաջին դեսպանն էր ԱՄՆի մէջ: Յատուկ շնորհակալութիւններ նաեւ քանդակագործ զոկտոր Մկրտիչ Տարազճեանին ու ճարտարապետ Արամ Ալաջալեանին, որոնք սիրալոյսով կերպով ստանձնեցին կիսանդրիին ու պատուանդանին կառուցումը. շնորհակալութիւն նաեւ ընկեր Զոհրապ Թագեանին, որ այս նախաձեռնութեան գլխաւոր կնքահայրերէն է»:

Վանգուվրի ՀՕՄ-ի «Արագ» Ծաբաթօրեայ վարժարանի տարեկերջի հանդէս



Շաբաթ, 9 Յունիս 2018-ին տեղի ունեցաւ Վանգուվրի ՀՕՄ-ի «Արագ» Ծաբաթօրեայ վարժարանի տարեկերջի հանդէսը, Հայ կեդրոնի «Լազարեան» սրահէն ներս, ներկայութեամբ ծնողներու, բարեկամներու, ուսուցիչներու եւ աշակերտներու: Հանդիսութիւնը սկսաւ Տէրունական աղօթքով: Մանուկները նախ երգեցին Հայաստանի եւ դպրոցի քայերգները, ապա գրաւեցին իրենց տեղերը:

Ձեռնարկին բացումը կատարեց Վանգուվրի ՀՕՄ-ի «Արագ» մասնաճիւղի ատենապետուհի եւ տեղւոյն վարժարանի տնօրէնութենէն՝ ընկերուհի Սօսի Թերզեանը, որ ծնողներուն ուղղած բարի գալուստի եւ շնորհակալական խօսքերէն ետք, նշեց թէ ՀՕՄ-ի եւ շաբաթօրեայ վարժարանի գործունէութիւնը ուղղուած է մէկ նպատակի՝ նուիրուել հայապահպանութեան կարեւորագոյն գործին, պատրաստել եւ հայեցի դաստիարակութիւն ջամբել հայ պատանիներուն ու աղջիկներուն եւ ազատել զանոնք օտարամատուցութեան վտանգէն:

Յայտագիրը սկսաւ Փոքրերու դասարանի ելոյթով, որոնք խմբովին երգեցին «Կենդանիներու ժողովը» եւ «Զիւաւորներու երգը», ապա անհատական արտասանութիւններով հանդէս եկան: Անոնք իրենց երգերով եւ արտասանութիւններով ոգեւորեցին բոլոր ներկաները: Յաջորդ բեմ բարձրացողները եղան Մեծերու դասարանի աշակերտները, որոնք խմբովին երգեցին «Ով մեծաքանչ դու լիզու», «Հայրերիք», «Սարգարապատ» եւ «Ես կամ» երգերը. այս վերջինը յուզեց ներկաները եւ միեւնոյն ատեն սիրով եւ խանդավառութեամբ լիցուց բոլորին սրտերը: Անոնք նաեւ հանդէս եկան Յովհաննէս Շիրազի «Հայերէն» արտասանութեամբ:

Յայտագրի աւարտին խօսք առաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ եւ տեղւոյն վարժարանի դասատու՝ Հայր Գարեգին Վարդապետ Շիրազեանը: Ան բարձր գնահատեց ուսուցչական կազմին տարած անշահախնդիր աշխատանքը: Մտքիկ Սիւլախեան Զափանեան

Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Ծաբաթօրեայ վարժարանը, որ հիմնուած է 1958-ին, Մոնթրէալի առաջին հայ կրթական հաստատութիւններէն մէկն է:

Սուրբ Յակոբ Եկեղեցւոյ Ծաբաթօրեայ վարժարանը 2018-19 տարեշրջանին համար կարիքը ունի

ՏՆՕՐԷՆԻ

Թեկնածուն պարտի լրացնել հետեւեալ պայմանները.

- Հայկական վարժարանէ մը ներս մանկավարժական (նախընտրաբար վկայեալ) փորձառութիւն
- Ուսումնական կամ այլ միջավայրի մէջ խմբային աշխատանք կազմակերպելու եւ դեկավարելու կարողութիւն
- Հայերէնի, ֆրանսերէնի եւ անգլերէնի տիրապետութիւն եւ հաղորդակցութեան հմտութիւն
- Համակարգիչի գործածութեան իմացութիւն
- Արդիական միջոցներով ուսումնական ծրագրի մշակման եւ դասաւանդման կարողութիւն


Ուսուցչական վկայագիր ունենալը առաւելութիւն կը նկատուի:

Հետաքրքրուողները պարտին դիմել Կրթական Գործադիր Մարմնի գրասենեակ իրենց cv-ները ուղարկելով հետեւեալ հասցէին.-

Դիմումագրի Ժամկէտ: 12 Յուլիս 2018

Conseil d'administration scolaire
3401 Olivar Asselin
Montréal, Qc H4J 1L5
raffi.apanian@hotmail.com
conseilscolaire@ecolesourphagop.com

Տաճկահայ Գաղթաշարժը Եւ Անոնց Դերը Հայաստանի Հանրապետութեան Կազմութեան Մէջ - ԻԱ.



Գրուիս Վեցերորդ
1918-ի Պատերազմը
1.

1918-ի Հայ-թրքական պատերազմը երկու փուլեր ունի: Առաջին փուլը կը ներկայացնէ այն գործողութիւնները, որոնք տեղի ունեցան Տաճկահայաստանի հողին վրայ: Երկրորդ փուլը կը սկսի այն վայրկեանէն, երբ թրքական զօրքը, առանց կանգ առնելու 1914-ի ռուս-թրքական սահմանի վրայ, կ'առաջանար Կովկասեան Հայաստանի ներքը: Պատերազմի երկրորդ փուլի մասին չպիտի խօսիմ. այդ կապուած է ամբողջովին Ազգային Խորհուրդի եւ Հայաստանի Հանրապետու-

էր Կովկասի կծիկէն: Հայաստանի մահամերձի վերջին կորովի դիմադրութիւնն այն դարձակէտն եղաւ, որ վերջ տուաւ բանակցութիւններուն եւ ստորագրուեցաւ Բաթումի դաշնագիրը Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ: Բացի դիւանագիտական այս աշխատանքներէն եւ զինուորական ուժերու պատրաստութենէն, Տաճկահայաստանի մէջ մնացած թուրքերու եւ քիւրտերու հետ հաշտութեան լեզու մը գտնելու մտահոգութիւնն ունէինք, թիկունքէն նուազ հարուած կրելու համար: Թուրքերը բացառաբար կը բնակուէին Էրզրումի եւ Երզնկայի շրջաններու մէջ, ու համակուած էին բացարձակ թշնամութեամբ: Թրքական զօրքը որքան վտանգաւոր

Սղերդի եւ Հէքեարիի շրջաններու մէջ՝ 1916էն սկսած: Մենք անկեղծօրէն ձեռք կը կարկուէինք քիւրտ ժողովրդին. կը յայտարարէինք որ կը մոռնանք իրենց անցեալ ոճիրները, որոնց գլխաւոր պատասխանատուն թիւրք կառավարութիւնն էր, իր զրգուծներով եւ յետին մտքերով, եւ կ'ուզէինք որ ըմբռնեն թէ՛ իրենց եւ հայոց բախտը իրարու շողկապուած էր եւ որ Հայաստանի



թեան ստեղծման պատմութեան հետ, ու կ'արժէ առանձին ուսումնասիրութեան նիւթ դարձնել:

Ռուսական զօրքի քայքայումով Տաճկահայաստանը կը մնար մինակ, սակայն ոչ իր սեփական ուժերը եւ ոչ ալ իր կազմակերպական վիճակը չէին թոյլատրեր, որ իր բախտը տնօրինէր անկախօրէն: Այդ տեղ հանդէս կուգար ամբողջ հայութիւնը: Սակայն հայութեան կեդրոնը Թիֆլիսն էր եւ խճճուած էր կովկասեան հանգոյցաւոր կծիկին մէջ, ու այդպիսով, ամբողջական հայութիւնն իսկ անկախօրէն չարժուելու հնարաւորութիւններէն զրկուած էր:

Թուրքերը ռուսերու հեռանալը տեսնելով սկսան իրենց յարձակողականը երկու ուղղութեամբ. ա) դիւանագիտական, եւ բ) զինուորական: Զինուորական գործողութիւնները նոյնաբերին եւ դեկտեմբերին տակաւին թոյլ էին. թուրքերը իրենց ուժերը տակաւին չէին կեդրոնացուցած: Իսկ դիւանագիտական յարձակողականը շատ ուժեղ էր: Անոնք հայերու հետ չուզեցին խօսիլ. այլ կովկասեան միութիւնը նկատեցին օրինաւոր յաջորդը Ռուսաստանի, որպէսզի հայերը աւելի չըթալուէին կովկասեան ազգերու ցանցին, գրկուէին ձեռներէցութենէ եւ վճռականութենէ: Անոնք բանակցութիւններով ուզեցին թուլացնել դիմադրական ամէն կորով: Այդ բանակցութիւնները որեւէ դրական արդիւնքի յանգելու դիտաւորութենէ հեռու էին:

Առաջին բանակցութիւնը սկսաւ 1917-ի նոյեմբերի վերջերը, Երզնկայի ճակատի վրայ, գինադադարի մտքով, բայց առանց արդիւնքի: Թրքական զօրքի շարժումները կանգ չառան: Զօրքի յառաջխաղացութեան համընթաց, գինադադարի եւ հաշտութեան բանակցութիւններու շարքը կ'երկարէր: Բանակցութիւնները 1918-ի փետրուար 27-ին փոխադրուեցան Տրապիզոն, դարձեալ ապարդիւն: Այն տեղէն բանակցութեան վայրը, թրքական զօրքի հետ մէկտեղ, մայիսին փոխադրուեցաւ Բաթում: Բայց մայիսի վերջին շաբաթը հայկական ազատագրութեան վճռական օրերն եղան: Տեղի ունեցան Սարգարապատի եւ Ղարաբիլիսէի ճակատամարտները: Հայութիւնը կտրուած էր Կովկասէն. փակուած էին բոլոր դռները. չըջապատուած թշնամիներէ, անիկա այլեւս անկախ էր... Յունիսի առաջին շաբթուան, Բաթումի բանակցութիւնը տեղի կ'ունենար Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ, անջատօրէն: Մեր թերը կտրուած

էր իր յարձակողականով, նոյնքան վտանգաւոր էին Երզնկայի, Բաբերդի եւ Էրզրումի թուրքերն իրենց թիկունքային աշխատանքով: Թուրքերը հանդարտ պահելու համար Մուրատի, Սեպուհի եւ այլոց թափած ջանքերն ու խորհուրդներն ապարդիւն կ'անցնէին եւ խօսքը կը մնար գէնքին: Այդ շրջաններու մէջ հո՞ծ եւ կազմակերպուած հայութիւն մը չունէինք, որպէսզի խնդիրը արմատապէս լուծուէր զինուած ժողովրդի բախումով: Պատերազմական ճակատի թիկունքը ապահովելու աշխատանքը, այդ շրջաններու մէջ, ծանրացաւ Մուրատի, Սեպուհի եւ քանի մը փոքր խումբերու վրայ, որոնք իրենց կարելին ըրին, երկու կողմի մէջ չմնալու համար:

Զիլանի քիւրտերը կը մնային անհաշտ ու կողմացած: Անոնց հետ չփման հնարաւորութիւններ չունեցանք, հակառակ երկու տարուայ տիրապետութեան:

Սակայն Տարօնի շրջանի պայմաններն այլ էին: Տարօնի շրջանի զինուորական եւ վրահական կեդրոնը Խնուսն էր: Խնուսի եւ Վարդոյի շրջաններու մէջ մնացած էին բաւական թուով քիւրտեր, որոնք կրնային վճռական դեր մը խաղալ պատերազմի միջոցին: Այս մտահոգութիւններէն առաջնորդուած՝ մենք ուզեցինք սերտ բարեկամութիւն մը ստեղծել Շուշարի, Թէքմանի, Բինգէլի, Մաղալ-Սօրի եւ Վարդոյի քիւրտերուն հետ: Շարք մը խորհրդակցութիւններ ունեցանք Վարդոյի եւ Մաղալ-Սօրի քիւրտ երեւելիներու հետ, որոնք տակաւին չէին համոզուած թէ՛ թուրքը հայուն եւ քիւրտին հասարակաց թշնամին է: Հակառակ այդ երեւելիներու հաւատարմացումներուն, քիւրտերը մեր նահանջի ճանապարհները կը վտանգէին:

1918-ի փետրուար 7-ին Խնուսի մէջ գումարուեցաւ քրտական համագումար մը, որուն կը մասնակցէին 35 աչքի ինկած քիւրտեր: Համագումարը հրաւիրուած էր հայերու կողմէ, հայ-քրտական համերաշխութիւն մը ստեղծելու եւ ցոյց տալու որ թուրքերու յաղթանակը ոչ միայն հայերու համար աղէտալի պիտի ըլլար, այլ նաեւ քրտութեան մնացորդներու բնաջնջումն իր հետ պիտի բերէր: Այս ժողովին Վարդոյի շրջանի քիւրտերն եկած չէին: Զինուորական եւ քաղաքացիական իշխանութեան կողմէ ևս բախտն ունեցայ բանալու քրտական այդ ժողովը եւ մանրամասն թուեցի այն բոլոր ջարդերը որ թրքական կառավարութեան կողմէ գործադրուած էին քիւրտ ժողովրդի վրայ Տիգրանակերտի, Խարբերդի,

ազատութիւնը քիւրտերու ազատութիւնն էր միեւնոյն ժամանակ:

Այդ ժողովի մէջ մէկ հատիկ անկեղծ ու արթնցած քիւրտ չգտնուեցաւ: Ընդհանուր մուծ ամպ մը կար բոլորի դէմքին վրայ: Արեւելեան դիւանագիտութիւնն եւ խորամանկութիւնը կ'երեւնար իրենց բոլոր խօսածներու մէջ: Կը դատապարտէին Թուրքիան, կ'արտայայտէին իրենց ատելութիւնը, եւ անցեալի պատմութիւնները վկայութեան կը կանչէին, ցոյց տալու իրենց եւ թուրքերու թշնամութիւնները: Ինչ որ կը վերաբերէր քիւրտերու ատելութեան հանդէպ թուրք ցեղին, այդ կասկածէ դուրս էր. բայց անոնց հողի մէջ տակաւին հիմնական բեկում մը առաջացած չէր՝ տեսնելու նաեւ ա՛յն, որ այդ ատելի թուրքը ընդունակ էր բնաջնջելու քիւրտ ցեղը, ճիշդ հայերու պէս: Ասկէ գատ, քրտական հոգեբանութեան մէջ տեղի չէր ունեցած այն անհրաժեշտ փոփոխութիւնը, որ կրնային ըմբռնել թէ՛ հայն ու քիւրտը կրնան բարեկամ եւ դաշնակից դառնալ: Աղբրէյլանի թաթար ներկայացուցիչները բազմաթիւ անգամներ, ռուսական հովանիէն օգտուելով, եկած էին օգնելու մուսլիման ժողովուրդին, եւ փոխանակ օգնութիւն հասցնելու, ատելութիւն սերմանած էին հանդէպ հայերու եւ աւելի խորացուցած էին երկու ազգերու անըզպետը:

Քիւրտերը մեկնեցան հաւատարմութեան խոստումներ չուսուցելով, բայց ժողովէն մեր կրած տպաւորութիւնն այն եղաւ, որ այդ շրջաններու քիւրտերը մեր կարծածէն շատ աւելի անվստահելի էին եւ թշնամութեամբ տրամադրուած: Որով, ճակատի պաշտպանութեան չափ կարեւոր խնդիր մը կը դառնար թիկունքի ճանապարհները մաքրելու եւ ապահովելու հարցը:

Մաղալ-Սօրի շրջան 15 կտոր քրտական գիւղերը քանի մ'անգամ զինուորական կայաններու վրայ յարձակած էին եւ մեծապէս խանգարած էին դէպի Մուշ երկարող ճանապարհը. այդ պատճառով պատմիչ գործմաս մը զրկուեցաւ այդ շրջանը, որ կարճ ժամանակուայ ընթացքին մաքրեց եւ բոլորովին անվնաս դարձուց այդ ճանապարհը: Միւս քրտական շրջանները միայն մասնակի վնասներ կրեցին եւ քաղուեցան Բինգէլի աւելի բարձր լեռնալանջերուն վրայ:

ԿԱՌՕ ՍԱՍՈՒՆԻ

A.C.C. TORONTO

SUMMERFEST 2018

JULY 13 | 14 | 15



FULLY PAID FOR ONLY \$20 / TICKET



ARMENIAN RELIEF SOCIETY Summerfest Lottery Draw
 ONLY 3,000 TICKETS ISSUED - \$20 a ticket
 Draw Date - Sunday, July 15, 2018 at 9:00PM
Lottery License No. 1488107
 Total Value: \$2500 CAD

FRIDAY | \$25
 7:30pm - 2:00am

SATURDAY | \$30
 5:00pm - 2:00am

SUNDAY | \$20
 10:00am - 12:00am

\$20 EARLY BIRD 5:30pm - 7:30am
 SATURDAY, CHILDREN 12 & UNDER FREE
 Compliments of the Baboujian Family

\$15 EARLY BIRD 10:00am - 2:00pm
 SUNDAY, CHILDREN 12 & UNDER FREE
 Morning Compliments of Dr. Boyrazian
 Evening Compliments of Krikorian Realty



HAROUT PAMBOUKJIAN
 FRIDAY JULY 13
 ԿԻՐԱՐՆ 13 ՅՈՒՆԻՍ



SARO
 FRIDAY JULY 13
 ԿԻՐԱՐՆ 13 ՅՈՒՆԻՍ



RAZMIK AMYAN
 SATURDAY JULY 14
 ՇԱՔԱՐ 14 ՅՈՒՆԻՍ



SAKO
 SATURDAY JULY 14
 ՇԱՔԱՐ 14 ՅՈՒՆԻՍ



ARAM MP3
 SUNDAY JULY 15
 ԿԻՐԱՐՆ 15 ՅՈՒՆԻՍ



ARPI
 SUNDAY JULY 15
 ԿԻՐԱՐՆ 15 ՅՈՒՆԻՍ



ELEMENT BAND
 SUNDAY JULY 15
 ԿԻՐԱՐՆ 15 ՅՈՒՆԻՍ

SPECIAL SUNDAY FAMILY PROGRAM

LIVE STREAMING THE FINAL FIFA WORLD CUP GAME at 11:00AM
DANCE PERFORMANCES by Hamazkayin "Erepuni" Dance Ensemble & Sassoun Dance Ensemble
PETTING ZOO with Farm & Exotic Animals . **MAGIC SHOW** . **ARCADE GAMES & MORE!**

BE SURE TO VISIT OUR MARKET VENDORS



MAJOR PLATINUM FOOD SPONSOR




#accsummerfest2018

PLATINUM SPONSOR



Homenetmen Centennial Events Calendar July 19 – July 29





ԲԱԲԵԼՈՆ | BABYLON
RESTAURANT



NOW OPEN
YEREVAN | ARMENIA

91 PAVSTOS BUZAND STREET

TEL: +374 93 588885 | +374 60 488884 | E-MAIL: babylon.armenia@gmail.com



ՀԱՅ ՕԳԼՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ - ԳԱՆԱՏԱ
ARMENIAN RELIEF SOCIETY - CANADA

Join us in Vancouver
September 18 – 23, 2018



In Celebration of "ARAZ" chapter 40th Anniversary and the
100th Anniversary of the Republic of Armenia

Սեմինար-Շրջապտույտ նուիրում՝

ՀՕՄ-ի Վանգուվերի « Արազ » մասնաճիւղի հիմնադրութեան 40-ամեակին եւ
Հայաստանի Առաջին Հանրապետութեան հիմնադրութեան 100-ամեակին

\$1,300

Includes: All excursions, 40th Anniversary Gala
and bus transfers from and to the airport. Century
Plaza Hotel & Spa (1015 Burrard St., Vancouver)
Breakfast, Lunch and Dinner

(Airfare not included)

ARRIVAL	DAY 1	DAY 2	DAY 3	DAY 4
Tues., September 18	Wed., September 19	Thurs., September 20	Fri., September 21	Sat., September 22
	Capilano Suspension Bridge	Ferry to Victoria's Butchart Gardens and Church and State Winery Tour	SEMINAR	
Welcome reception at Century Plaza Hotel	Sunset Dinner Cruise		Dinner	40th anniversary Gala Evening
For reservations and information: ars-canada@bellnet.ca	Annie Ohanian: 514-929-2239 Sylvie Ohanian: 416-618-9614 Nathalie Manoukian: 905-570-4523		Deadline for reservations: August 30, 2018	



**Pharmacie
Levon Benohanian et
Mher Koubelian Inc.**
Pharmaciens-propriétaires

3915, Boulevard Samson
Laval, QC H7W 2G1



T 450 688-4111
F 450 681-5525
proximlaval@gmail.com

Lun. au vend. : 8h30 à 21h
Sam. et dim. : 9h à 17h
Infirmière (jeudi) : 8h30 à 15h



Անվճար սպասարկու թիւն մինչեւ ձեր տունը.
Շաբաթական դեղատուփիկի պատրաստութիւն.
Ազատ փոխադրում ձեր դեղացանկի (dossier)
այլ դեղարանէ. Դեղերու պատուաստում
(vaccination) հիւանդապսիի կողմէ.

Բուժական հետեւում՝
արևան բարակութեան (INR), շնչերակային
ճնշման (tension artérielle), արեան շաքարի
(glycémie capillaire), արևան մաղձաճարպի
(cholesterol), եւն.

**NEW DAYCARE
GARDERIE**
ÉDUCATIVE-BILINGUE
TIC·TAC·TOC

CHOMEDEY



4 Branches / 10 years of experience

•Open Monday to Friday
6:30 AM to 6:30 PM
& Thursdays we close at 9:30 PM

•Open weekends for our
registered kids & Drop-Off Service
available as well

•Pre-Kindergarten program

•Language lessons: Armenian,
Italian, Greek ...

•Professional & qualified educators
•Activities: Zumba, Yoga, Music,
Cooking & Scientific Experiences

•"Baby Gym" exercise room

•Fresh nutritious meals

•Secure entrances & Camera system



450-934-4466

541 Boul. Curé-Labelle, Chomedey, Laval
www.garderiechomedeytictactoc.com



Հիանալի առիթ Գանատայի մէջ իրենց մասնագիտութիւնը կիրարկել
ուզող կամ աշխատանքի նոր առիթներ փնտռող անհատներու համար

**VERDUN ADULT
& CAREER CENTRE**

**Մատուցուած ուսումնական
ծրագիրներ**

Մասնագիտական ուսման վկայականներ (DEP)

Բնակարանային եւ առեւտրական
շէնքերու շինարարական նախագիծ
(ճարտարապետական գծագրութիւն)

Ջրամատակարարման եւ ջեռուցման
համակարգեր

Համակարգչային սարքաւորումներու
սպասարկութիւն եւ համացանցեր

Յանգստի մանրամասնութիւններու համար նապուշ:
WWW.LBPCE.CA/VACC | 514.798.0405

Ելեմտական օգնութիւն տրամադրուած է

Վկայականը վաւերացուած է Կրթական
Նախարարութեան կողմէ



6050 boulevard Champlain,
Verdun, QC
H4H 1A5
Tel: 514-798-0405

**Նոր ասպարէզ կրնաք մուտք գործել
16 ամիսէն**

STM Ateliers de formation
Inc. 112



Lester B. Pearson
Verdun Adult and Career Centre

ՍՈՒՐ ԱՆԿԻՒՆԷՆ ԵՐԷ Կ՛ուզես թագաւոր ըլլալ...

Ո՞վ չ՛ուզեր թագաւոր ըլլալ։

Բայց ի՞նչ պէտք է ընես, եթէ կ՛ուզես թագաւոր ըլլալ։

Վստահ եմ, այս հարցումը անցած է մտքէդ, դոնէ մէկ անգամ։ Յետոյ խորհած ես, թէ ամեն մարդու չէ՛ տրուած թագաւոր ըլլալը։ Սակայն յաճախ ալ հարց տուած ես դուն քեզի՛ ինչո՞ւ ան, եւ ո՛չ ես։ Ի՞նչ առաւելութիւններ ունի ան,— որ յաջողեր է թագաւոր ըլլալ,— որ ես չունիմ։

Հաւատալովմ, որ ռեւէ մէկը թագաւոր ըլլալու իրաւունքը պէ՛տք է ունենայ,— մարդկային իրաւանց նուազագոյնը համարելու ենք ասիկա,— նստայ համա-կարգիչիս պաստառին առջև ու գրի առի բոլոր այն պայմաններն ու բարեմասնութիւնները, որոնք անհրաժեշտ պիտի ըլլան, որ ես կամ դուն կարենանք գահ բարձրանալ։

Առաջին հերթին պիտի ըլլաս հարիւր առ հարիւր ինքնավստահ. դո՛ւն ես լաւագոյն թեկնածուն, քեզմէ լաւը չի՛ կրնար ըլլալ։ Բայց ասիկա քո՛ւ կարծիքդ է. ամեն մարդ քու մասիդ պէտք է նոյն կարծիքը ունե-նայ։ Ուրեմն ասիկա պիտի կրկնես բոլո՛ր բեմերուն վրայ, ամե՛ն առիթի, ամեն տեղ՝ փողոցը ըլլայ թէ ճա-շարահաներուն մէջ, բոլո՛ր հանդիսութիւններուն, հա-ւաքներուն։ Պիտի երեւի՛ս, շա՛տ պիտի երեւիս, պիտի նկարուիս բոլորին հետ, մի՛շտ վստահ ըլլալով, որ տե-սախցիկին աչքը քո՛ւ վրադ կեդրոնացած է։

Կարեւոր է նաեւ, թէ ինչպէ՛ս կ՛երեւիս ժողովուրդիդ աչքին. Բնակարանդ պալատանման պէտք է ըլլայ, նոյնիսկ եթէ տակաւին թագաւոր չես։ Բնակարաննե՛րդ՝ ամառուան թէ ձմեռուան։ Ինքնաշարժդ, ոչ՝ ինքնա-շարժներդ՝ շքեղագոյնները։ Չմոռնաս նաեւ մէկ կամ մի քանի սեփական օդանաւ ունենալ։ Հագոււտ-կա-պոււտդ՝ համաշխարհային ամենէն անուանի գեղար-կիչներուն–designerներուն կողմէ ստորագրուած, միայն մէկ անգամ նոյնը հագնելու պայմանաւ։ Պիտի ցոյց

տաս՝ ի՛նչ փարթամ արձակուրդներ կը վայելես, ի՛նչ ճոխ սեղաններ կը մատուցուին քեզի։

Բայց զգո՛ւշ։ Կարեւոր է նաեւ, թէ ի՛նչ պիտի ըսես կամ չըսես։ Կարեւոր չէ, որ զարգացած ըլլաս, կա-րեւորը զարգացած երեւի՛լն է, կարեւոր չէ, որ պատգամ մը ունենաս փոխանցելիք, կարեւորը ամեն մէկ խօսքիդ՝ բոլորին պատգամ թուի՛լն է, նոյնիսկ եթէ որեւէ բան չես ըսեր այդ խօսածիդ մէջ։ Մարդիկ չեն հետաքրքը-ուած թէ ի՛նչ կը մտածես այս կամ այն հարցին մասին, կարեւորը՝ կրկնես ինչ որ իրենք կ՛ուզեն լսել, իրե՛նց ուզածը պիտի որդեգրես. Ամեն հասարակութեան առջեւ ատիկա կրնայ տարբեր ըլլալ, այսօրուան ըսածդ կրնայ հակասել երէկուան ըսածիդ, արդէն չեն յիշեր ի՛նչ կ՛ըսէիր երէկ, կարեւորը՝ քո՛ւ բերնէդ լսեն իրենց մտքէն անցածը, որքան ալ ատիկա ընդունելի ըլլայ կամ ոչ։ Արդէն ընդունելի ըլլալու կամ չըլլալու հարց ալ չկայ, քանի որ ճիշտի կամ սխալի, իրաւի կամ սուտի հարց չկայ։ Ինչ որ ըսես՝ ա՛յդ է ճիշտը, իրաւը։ Լա՛ւ գիտցիր օգտուել մարդոց նախապաշարումներէն եւ թիւրիմա-ցութիւններէն, կարճրամտութիւններէն եւ... տգիտու-թենէն։

Գիտցի՛ր նաեւ, լա՛ւ գիտցի՛ր՝ թագաւոր պիտի չըլ-լաս բոլորին ծառայելու համար, այլ պիտի ըլլաս՝ բոլո-րը քեզի՛ ծառայեցնելու համար։ Կաս ու չկաս՝ դո՛ւն կաս։ Քեզի բարեւ ըսելն անգամ իր գինը պիտի ունե-նայ։

Քու գլխաւոր հարստութիւնդ՝ դո՛ւն ես. Գլխաւոր արժէքդ ալ դուն ես։ Սեփական շահդ ամեն բանէ առաջ ու ամեն բանէ վեր։ Ազգ–հայրենիք–եկեղեցի–ժողովրդավարութիւն–ուսում–գիտութիւն՝ նման եզրերը բա՛ռ են միայն, օգտագործէ ուզածիդ պէս, բայց չըլլա՛յ որ հաւատաս անոնց ու սեփական շահէդ վեր դասես։ Ան-տեսէ ամեն օրէնք ու սահմանադրութիւն։ Օրէնքը դո՛ւն ես, սահմանադրութիւնը քո՛ւ խօսքդ է։

Շրջապատուէ մարդոցմով, որ քեզ լաւագո՞յն ձե-

ՈՒՅՏԻՆ ՏԱՊԱՆԱԿԸ

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Անթիլիաս Փոխադրութիւնը

ԵՒ «ԱՐՏԱՌՈՑ»ԻՆ ՎԱԽՃԱՆԸ

Եւ հասած էր Օսմանեան Կայսրութեան հսկայա-կան նահանջներուն վերջին պահը։ Պալքանեան պատե-րազմներուն ժամանակ՝ արդէն կորսնցուցած էր մեծ մասը իր կողմէ գրաւեալ եւրոպական տարածքներուն։ Համաշխարհային Առաջին Պատերազմին ատեն, գի-նակցած ըլլալով Կեդրոնական Ուժերուն, եւ Համաձայ-նականներէն պարտուելով՝ Կեդրոնական Ուժերուն հետ անոր զօրքերն ալ նահանջներ պիտի ունենային։

Օսմանեան նահանջներէն մէկը Եգիպտոս–Պա-ղեստին–Սուրիա գիծին վրայ էր եղած, միւսը՝ Արաբա-կան Թերակղզի–Սուրիա։

1917–ի Հոկտեմբերին, անգլիական զօրքը Սուէզի կողմէն յառաջացած էր դէպի Երուսաղէմ։ Թուրք–գեր-մանական ուժերը ետ մղուած էին։ Եւ երբ արդէն թնդաօթներու որտուժմները սկսած էին լսուել Երու-սաղէմէն, ահա Օսմանեան Կառավարութիւնը որոշած էր քաղաքին բոլոր հոգեւոր պետերուն փոխադրու-թիւնը Դամասկոս։ Հրաման էր եկած, որ Սահակ Կաթո-ղիկոս, ինչպէս նաեւ Երուսաղէմի Յոյներու եւ Լատին-ներու Պատրիարքները իրենց Հոգեւոր ժողովներով մեկնէին։ Եւ ամէնքն ալ ենթարկուած էին հրամանին⁸⁰⁷։

Գահիրէի Արեւ օրաթերթը հետաքրքրուած ըլլա-լով՝ 29 Դեկտեմբեր թուակիր հետեգրով հետեւեալ տե-ղեկութիւնը ասած էր Երուսաղէմէն՝ Կաթողիկոսական փոխանորդ Գիւտ Եպօ. Մխիթարեանէ. «Ստացանք Ձեր հեռագիրը, որով տեղեկութիւններ կ՛ուզէիք Սրբազան Կաթողիկոսի, Օրմանեան եւ Յովակիմեան սրբազաննե-րու եւ վանքի գաղթականներուն մասին։

Փա՛ռք նախախնամութեան, վանքը, միաբանու-թիւնը եւ ազգայինները ոչ մի փորձութեան ենթարկ-ուեցան քաղաքի ազատագրումէն առաջ⁸⁰⁸։ Ու այսօր անգլիական կառավարութեան հովանաւորութեան տակ, մեր կացութիւնը բոլորովին գերծ է մտահոգութիւններէ։ Նոյեմբեր 6/19–ին, Սրբազան Կաթողիկոս–Պատրիարքը միւս ազգութեանց կրօնական պետերուն հետ փոխադը-ուեցաւ Դամասկոս՝ Օրմանեան սրբազանի ընկերակցու-թեամբ։ Հինգ օր վերջն ալ տարուեցան Հոգեւոր ժողովի անդամները, որոնցմէ երեքը հոս մնացին Սրբազան Կաթողիկոսին կարգադրութեամբ. Տ. Դաւիթ Ծ. Վրդ. Տէրտէրեան՝ Լուսարարապետութեան պաշտօնին բեր-մամբ, Տ. Ստեփանոս Արք. Յովակիմեան՝ իր յառաջա-ցած տարիքին եւ հիւանդութեան պատճառով, եւ մենք՝ իբր փոխանորդ։ Վանական կեանքն ու գործերը ըստ առաջնոյն կը շարունակուին։ Վանքիս մէջ կը գտնուին

500–ի մօտ գաղթականներ, մեծ մասմբ Կիլիկեցիներ, կան հայաստանցիներ ալ, ընտանիքով կամ առանց ըն-տանիքի։ Սոյն գաղթականներուն ստուար մեծամաս-նութիւնը շատ թշուառ վիճակի մէջ գտնուելով՝ անմի-ջական օգնութեան կը կարօտին։ Ասոնց կարգին կը գտնուին նաեւ 40–է աւելի անչափահաս որբեր եւ որ-բուհիներ որորմելի վիճակի մէջ (...) Կարօտները թէեւ վանքէն կը ստանան հաց եւ կերակուր միաբանութեան սնունդէն, բայց ոչ բաղձացուած որակով ու քանակով, որովհետեւ վանքն ալ իր կարգին նիւթական ծայրայեղ անձկութեան ենթարկուած է»⁸⁰⁹։

Կաթողիկոսին հետ Դամասկոս փոխադրուած Օր-մանեան արքեպիսկոպոս՝ այնտեղ պիտի մնար մինչեւ 8 Մայիս 1918, երբ Կ. Պոլիս պիտի մեկնէր։ Ան պիտի վախճանէր նոյն տարուայ 6 Նոյեմբերին։

Դամասկոս հասնելով, Սահակ Կաթողիկոս եւ իրենները տեղաւորուած էին Երուսաղէմապատկան Ս. Սարգիս վանքին մէջ, որ ունէր եկեղեցի մը, եւ «քանի մը կտոր կալուած»։ Կաթողիկոսը եկեղեցւոյ դիմացը գտնուող վանքապատկան տունն էր իջած⁸¹⁰։ Թշուա-ռութիւնը վերստին իրենց բաժինը պիտի ըլլար, ինչպէս ընդհանուրին եւ հայ բնակչութեան⁸¹¹։

Տարապակի ահագին վիշտին վրայ՝ այն թշուա-ռութիւնը չէր բաւեր, շուտով ծանրացած էր հայ այրե-րու եւ կիներու, նոյնիսկ պատանիներու ձերբակալումը, եւ խումբ խումբ զօրանոց փոխանորմը։ Կաթողիկոսը անմիջապէս Պետրոս Եպօ. Սարաճեանը, զոր կարգած էր Առաջնորդ Դամասկոսի, զրկած էր Կուսակալ Թահսին պէյի մօտ՝ հասկնալու, թէ ինչո՞ւ կիներ եւ պատանիներ ալ ձերբակալուած էին։ Կուսակալը ցաւ յայտնած էր պատահածին համար, եւ ըսած՝ թէ թիւրիմացութեան հետեւանք էր կիներուն եւ պատանիներուն ձերբակա-լումը։ Թէ տրուած հրամանը կը վերաբերէր մինչեւ 45 տարեկան երիտասարդներուն գինուորագրման։ Պատ-ուիրակ եպիսկոպոսը դէպի վանք ճամբուն վրայ՝ պիտի տեսնէր, որ կիներ իրենց զաւակներով դառնալու վրայ էին իրենց տուները։ Պետրոս եպիսկոպոս Կաթողիկոսին քով երթալով՝ գեկուցած էր Կուսակալին հետ հանդիպ-ման մասին։ Եւ Կաթողիկոսը՝ դառնօրէն պոռթկացած. «Սուտ են...սուտ։ Ո՞վ գիտէ ի՛նչ ճիւղային ծրագիր մը ունէին որ շուտով փոխեցին»։ Այս պոռթկումը իր մէջ ունէր նաեւ Տէր–Չօրեան հրեշային կոտորածներուն արձագանագը։ Արդէն Դամասկոսի եւ շրջակայքի հա-յութիւնը նոյն ահաւոր վախճանին սպասման մէջ էր։ Լուր տարածուած էր, թէ սկզբնական որոշումը կոտորել

ւով պիտի ներկայացնեն աշխարհի առջեւ։ Կարեւոր չէ, թէ որքան հմուտ են, որքան օժտուած կազմակերպչա-կան ձիրքերով։ Ո՛չ դուն պէտք ունիս նման բաներու, ոչ՝ ալ իրենք։ Կարեւորը գիտնան քեզի հաճոյանալ, քեզ երջանիկ պահել, խօսքդ քալեցնել։ Եւ հարստութիւնդ աւելցնել։ Չմոռնաս այդ հարստութեանդ կարեւոր մասն ալ արտեգրային հաշիւներու մէջ դնել՝ երկրէն դուրս, որովհետեւ չես գիտեր ի՛նչ կ՛ըլլայ–չ՛ըլլար։ Ոեւէ մէ-կուն կարծիքը առնելու պէտք չունիս, ռեւէ մէկուն հետ խորհրդակցելու պէտք չունիս։ Ոչ ոք կրնայ որոշում կայացնել բացի քեզմէ։ Իսկ ո՛վ հետդ չէ՛՝ համարէ թշնամիդ։

Բայց դարձեալ զգո՛ւշ, Կեսա՛ր։ Ոչ ոքի՛ չվստա-հիս։ Ըսի, դուն ես եւ դուն։ Ամենէն վստահելին անգամ Բրուտոս մը կրնայ ըլլալ վաղը. քու նպատակդ տիրա-պետել է, երկա՛ր ժամանակ, թոյլ չտալով, որ նորելուկ յաւակնորդներ թագաւոր ուզեն ըլլալ թագաւորին տեղ։ Մեծագոյն առաքինութիւնդ՝ պատեհապաշտու-թիւնը։ Օգտուէ՛ որքան որ կրնաս։

Յանկարծ անուշ երաժշտութիւն մը տարածուեցաւ սենեակիս մէջ։

— Արթնցի՛ր, արթնցի՛ր,— մշտեց կողքէս կինս, այսօր գրասենեակ պիտի չերթա՞ս։

Չարթուցիչ ձայնասփիւռս էր։

«Վա՛յ, ես ալ թագաւոր ըլլալու կը պատրաստ-ուէի»,— ըսի մտքէս ու անկողինէս վեր ցատկեցի։ «Ափսո՞ս, ինչ լաւ պիտի ըլլար»։

— Ի՞նչ է, երա՞գ կը տեսնէիր,— հարցուց կինս։

— Այո, քիչ մնաց թագաւոր պիտի ըլլայի։

— Վա՛խ, վա՛խ, երանի չարթնցնէի, ես ալ թագու-հի կ՛ըլլայի...

Երանի սակայն զարթուցիչ ձայնասփիւռներ ու-նենան բոլոր թագաւոր ըլլալ ուզողները...

ԿՐԷԺ-ԱՐՄԷՆ

էր, բայց ետքը Աւստրիոյ դեսպանի «բուռն բողոք»ին վրայ՝ փոխուած էր գինուորագրութեան⁸¹²։

Տեղւոյն արաբներուն մէջ հետզհետէ աւելի զգալի դարձած էր ուրախ տրամադրութիւն մը, որ հասկցուած էր իբր նշան՝ թէ «այդ կողմի թրքական բանակները նախանձելի վիճակ չունէին»։ Ակնդէտ սպասուած էր անգլիական բանակը։ Ամիսները շատ դանդաղ անցած էին։ Եւ վերջապէս եկած էր ցանկալի օրը, երբ շուկներ շրջած էին, թէ թուրք–գերմանական զօրքերը նահանջի մէջ են։ Չէր ուշացած օրը, երբ սուրհանդակներ պաշտօ-նական դէմքեր հրաւիրած էին ներկայ ըլլալու Էմիր Ֆայսալի Դամասկոս ժամանման։ (Այս Էմիրին հայրը՝ Շէրիֆ Հիւսէյն արաբական ապստամբութիւնը յայտա-բարած էր 5 Յունիս 1916–ին, եւ սկսած)։ Էմիրը քաղաք մտած էր անգլիական եւ արաբական միացեալ զօրքե-րով։ Կաթողիկոսը իր ներկայութիւնը հաստատած էր ստորագրելով իրեն մատուցուած թուղթը, եւ ըսած. «Գոհութիւն Աստուծոյ, վերջապէս ազատեցայ սա պի-տակ տիտղոսէն Կաթողիկոս–Պատրիարքի, այն ալ՝ Ընդհանուր Թուրքիոյ...ուրկի՛ց յղացան այս հակազ-գային եւ հակա–օրինական վանդալական գաղափարը։ Փա՛ռք Տիրոջ։ Ազատեցանք թէ՛ կեղծ տիտղոսներէ եւ թէ՛ իրենցմէ...ես միայն Կիլիկիոյ Կաթողիկոս եմ...կը դառնանք մեր աւերած բոյները շինելու»⁸¹³։ Անշուշտ դեռ Կ. Պոլիսը պիտի վերահաստատէր Պատրիարքու-թիւնը, եւ Չաւէն Պոր. Տէր Եղիայեանը վերաբազմեց-նէր Աթոռին. ու Երուսաղէմն ալ պիտի ունենար ի՛ր Պատրիարքը։ Իսկ ինք պիտակազատ պիտի սպասէր Կի-լիկիա վերադարձի օրը...

Սահակ Կաթողիկոս 29 Սեպտեմբերին է, որ առիթ ունեցած էր այցելելու Էմիրին։ Ան սիրալիբ ընդունե-լութիւն մը ցուցաբերած էր, եւ հաւանաբար ի պատաս-խան Կաթողիկոսի խնդակցութեան եւ շնորհաւորանքին՝ ըսած. «Երկուքնիս ալ ուրախ ենք, երկուքնիս ալ շնոր-հաւորութեան արժանի ենք։ Ես ալ ուրախակից եմ ձեզի, եւ կը շնորհաւորեմ Ձեզ եւ Ձեր ժողովուրդին ազատու-թիւնը»⁸¹⁴։

30 Հոկտեմբերին պիտի կնքուէր Մոււտրոսի գի-նադադարը։ Համաձայնական պետութիւններուն զրա-հաւորները պիտի մտնէին Կ. Պոլիս, եւ Վոսփորի մէջ Վահտէտտին Սուլթանի պալատին առջև խարսխէին։

^[1] Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Անթիլիաս Փոխադրութիւնը

^[2] Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Անթիլիաս Փոխադրութիւնը

^[3] Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Անթիլիաս Փոխադրութիւնը

^[4] Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Անթիլիաս Փոխադրութիւնը

^[5] Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Անթիլիաս Փոխադրութիւնը

^[6] Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Անթիլիաս Փոխադրութիւնը

^[7] Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Անթիլիաս Փոխադրութիւնը

^[8] Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Անթիլիաս Փոխադրութիւնը

^[9] Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Անթիլիաս Փոխադրութիւնը

^[10] Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Անթիլիաս Փոխադրութիւնը

^[11] Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Անթիլիաս Փոխադրութիւնը

^[12] Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Անթիլիաս Փոխադրութիւնը

^[13] Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Անթիլիաս Փոխադրութիւնը

^[14] Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Անթիլիաս Փոխադրութիւնը

Կրօնափոխ հայությունը պատմությունը Գերկայացումը մեկ հատորի մեջ

Երեւանի մէջ 2014-ին լոյս տեսաւ Հայկազուն Ալվրցեանի «Կրօնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետութիւնում» գիրքը, բաղկացած՝ 152 էջերէ: Խմբագիր՝ Մելինէ Անուսեան:

Ներածութեան մէջ հեղինակը կ'ըսէ, որ օսմանեան կայսրութեան մէջ հայերու բռնի իսլամացման քաղաքականութիւնը ունի դարերու պատմութիւն, սակայն միայն 1915-1923-ին Հայոց ցեղասպանութիւնը, կոտորածները, տեղահանութիւնը եւ բռնի իսլամացումը արմատապէս փոխեցին երկրի ցեղագրական պատկերը: 1923-ին սկսաւ իսլամացման եւ թրքացման նոր փուլ, որ վերածուեցաւ հանրապետական Թուրքիոյ պետական քաղաքականութեան:

Գիրքին առաջին գլուխին մէջ ներկայացուած է իսլամացման քաղաքականութիւնը օսմանեան կայսրութեան մէջ եւ Թուրքիոյ Հանրապետութեան շրջանին:

Ալվրցեան կ'ըսէ, որ օսմանեան կայսրութեան մէջ իսլամացման կը նպաստէին մանկահաւաքը եւ կայսրութեան քրիստոնեայ ժողովուրդներու նկատմամբ պարբերաբար իրականացուող կոտորածներն ու հալածանքները, անոնց նկատմամբ գործադրուող ազգային, կրօնական եւ հարկային խտրական քաղաքականութիւնը:

Կոտորածներով, կրօնափոխութեամբ եւ հարկադրուած արտագաղթով սկսաւ Հայոց ցեղասպանութիւնը, որովհետեւ անոնք կը կատարուէին ազգային-կրօնական յատկանիշի հիման վրայ:

Հայոց ցեղասպանութեան օրերուն իսլամացումը ձեւական նախապայման էր գոյատեւելու, բայց յաճախ իսլամացածներն ալ չեն խուսափած կոտորածներէն:

Երկրորդ գլուխով ներկայացուած է իսլամացման գործընթացը 1923-էն ետք: Մուսթաֆա Քեմալ շարունակեց Երիտասարդ թուրքերու քաղաքականութիւնը, կոտորելով մօտ 300 հազար հայ: Երկրի հայկական, յունական եւ ասորական տեղանունները փոխուեցան: 1929-ին շարք մը նահանգներէ հայերուն պարտադրուեցաւ արտագաղթել: 1942-ին հաստատուեցաւ ունեւորութեան տուրքը: Շատ մը եկեղեցիներ փակուեցան ու ակերուեցան: Արեւմտեան Հայաստանի մէջ նոր թափ առաւ իսլամացման գործընթացը:

Երրորդ գլուխով կը ներկայացուի կրօնափոխ հայութեան խումբերն ու բնակութեան վայրերը:

Թուրքիոյ մէջ բնակող կրօնափոխ հայերը ըստ կրօնական յատկանիշի կը բաժնուին երկու խումբի՝ սիւննի իսլամներ եւ ալեկիներ: Ըստ ազգային յատկանիշի պատկերը աւելի խառնարկէ Է՝ քիւրտեր, թուրքեր, զազաներ, մասամբ՝ արաբներ եւ ասորիներ: Առանձին մեծ խումբ կը կազմեն իսլամացած համալեռահայերը:

Առաջին խումբի հայերը 1915-էն ի վեր կը շարունակեն ապրել քիւրտերու կամ թուրքերու կողքին՝ իրենց իսլամներ: Անոնց հիմնական մասը իսլամ ընտանիքներու մէջ դաստիարակուած հոգեգաւակներու սերունդներն են: Եթէ անգամ տեղեակ են իրենց հայկական ծագման մասին, առանձնապէս հակամէտ չեն վերագառնալու այդ ինքնութեան: Հաշտուած են կատարուած իրողութեան հետ եւ չեն փորձեր իրենց համար բարդութիւններ ստեղծել:

Երկրորդ խումբը կը կազմեն գաղտնի կամ ծպտեալ հայեր, որոնք կը գիտակցին իրենց ազգային պատկանելիութեան, գայն գաղտնի կերպով կը փորձեն սերունդէ-սերունդ, իրենց ընտանիքներուն մէջ կը պահպանեն հայկական ազգային որոշ սովորութիւններ, ակամաութիւններ եւ մշակութային տարրեր, եւ կը խուսափին օտարներու հետ ամուսնանալէ: Այսինքն՝ անոնք կ'ամուսնանան իրենց նման ծպտեալներու հետ: Անոնք նպաստաւոր պայմաններու մէջ մկրտութեան ճամբով կը վերագառնան հայկական ինքնութեան:

Առանձին խումբ կը կազմեն հայ կիներէ ծնածներու սերունդները:

Չորրորդ գլուխով ներկայացուած են Համալեռն ու Համալեռահայերը եւ Տէրսիմն ու Կարսի հայերը:

Համալեռահայութիւնը ըստ բնակութեան վայրի, դաւանանքի եւ լեզուի՝ բաժնուած է երեք հիմնական խումբի. արեւմտեան համալեռահայեր, որոնք թրքախօս են եւ սիւննի իսլամ, արեւելեան համալեռահայեր, որոնք հայախօս են եւ սիւննի իսլամ, եւ հիւսիսային համալեռահայեր, որոնք կը բնակին Արեւադիոյ եւ Ռուսիոյ մէջ եւ կը խօսին Հալաբէի բարբառ ու քրիստոնեայ են:

Մեծ եղեռնէն ետք Տէրսիմ մնացած հայերը ալեկիացած են: 1937-1938-ին տէրսիմցիներու նկատմամբ իրականացուած ցեղասպանութեան ժամանակ սպաննուած է մօտ 15 հազար հայ:

Այսօր Տէրսիմի գաղտնիքը, քիւրտերը եւ հայերը կ'ապրին ազգային ինքնագիտակցութեան զարթոնքի շրջան: Կազմուած է Տէրսիմի հայերու միութիւնը:

Հինգերորդ գլուխով ներկայացուած են, ազգայնամոլութիւնը խարխուղ թրքական ինքնութեան համայնապատկերին մէջ՝ կրօնափոխ հայութեան ինքնութեան վերադարձը եւ հակահայ շարունակուող քարոզչութիւնը:

ԱՍՊԵՏ ՄԱՆՃԻԿԵԱՆ

Լիբանանցի Հայ Ընտանիքի Մը Անցեալն Ու Ներկան

Լիբանանցի բարեկամէ մը ստացայ Սամի Թուրքիայի կողմէ աշխատասիրուած, Ֆրանսերէնով հրատարակուած «Սարաֆեան, Լիբանան 1900-1930» խորագիրով հատոր մը:

Սարաֆեան եղբայրները հանրաժանօթ եղած են քսաներորդ դարու առաջին կիսուն՝ իրենց լիբանանեան եւ արաբական երկիրներու մէջ լուսանկարչներ, որոնց աշխատանքով հրատարակուած են փոսթքարտեր եւ վերածուած պատմական արժէքի:

Պիտի չանգրադառնամ լուսանկարչական իրենց գործունէութեան:

Նիւթը Հայ տիպար ընտանիքի մը պատմութիւնն է 1870-ական թուականներէն սկսեալ, բայց...

Սարաֆեան երեք եղբայրները՝ Աբրահամ, Պօղոս եւ Սամուէլ, սերած են աւետարանական ընտանիքէ: Իրենց ծննդավայրը եղած է Տիգրանակերտ: Անոնք Լիբանան հաստատուած են Համիտեան ջարդերէն ետք, 1897-ին:

Համալեռահայի Ա. պատերազմի օրերուն եւ Ցեղասպանութեան իրենց հետեւանք Սուրիա ու Լիբանան հաստատուած հայերու պաշտպանութեան եւ օժանդակութեան մէջ հսկայ աշխատանք տարած են:

Աբրահամ Սարաֆեան ամուսնացած է Երանիկ Կարապետեանի հետ: Ունեցած են հինգ զաւակներ՝ Տիգրան, Լեւոն, Արաքսի, Արմինէ եւ Անի: Աբրահամ մահացած է 1926-ին:

Պօղոս Սարաֆեան ամուսնացած է Աննա Թիւֆենկեանի հետ, եւ ունեցած են երեք զաւակներ՝ Թագուհի, Ժորժ եւ Երուսնդ: Պօղոս մահացած է 1934-ին:

Սարաֆեան եղբայրներէն երրորդը՝ Սամուէլ, ամուսնացած է Զապէլ Աճեմեանի հետ: Զաւակները՝ Սաթինիկ, Անահիտ եւ Սոնա: Ան մահացած է 1941-ին:

Անկախ լուսանկարչութեան գործին մէջ իրենց արձանագրած յաջողութիւններէն, Սուրիոյ, Լիբանանի, Պղոստինի, Իրաքի եւ Թուրքիոյ մէջ, Սարաֆեան եղբայրները գործօն դերակատարութիւն ունեցած են տեղահանութենէն անմիջապէս ետք Լիբանանի գաղութի կազմակերպման եւ գաղթականներու

ֆիզիքական պահպանման գործին մէջ: Զանոնք կը տեսնենք Բարեգործական միութեան մէջ, Զմմառի վանքին, Կիլիկիոյ Սահակ կաթողիկոսին մօտ, որբանամ հաստատութեանց, կրթական կեանքի աշխուժացման եւ բարեսիրական աշխատանքներուն մէջ:

Երեք եղբայրներ, երեք հայ ընտանիքներ, հայկական անուններով զաւակներ, հայ կեանքին մասնակից եւ անոր մէջ դերակատարութիւն վերցուցած անհատներ:

Ու վերագառնանք բայցին...

Գիրքի հեղինակը՝ Սամի Թուրքիայ, Սարաֆեան ընտանիքի ծանօթացումը կատարելէ ետք, իր խօսքի վերջին բաժինով կը գրէ.

«Այսօր, անոնց շառուիղները տարածուած են աշխարհով մէկ: Լիբանանի մէջ սակայն, գտնելով հանդերձ Պուհէյ-րի, Քուրայան, Թահահան, Ֆատտուլ, Նուն, Բաբագեան, Նեհմէ, Չալաքեան, Օկարըն-Սմիթ եւ Թապեթ անունները, այլեւ չենք հանդիպել Սարաֆեան անունան նոր սերունդին մօտ:

Սարաֆեան ընտանիքի նման հայաշունչ ընտանիք մը, այսօր գէթ Լիբանանի մէջ չունի նոյնանուն ժառանգորդ: Կան ժառանգորդներ՝ ոչ հայ ընտանիքներուն մէջ:

Պատճառը, պատճառնե՞րը:

Խառն ամուսնութիւն, օտար կրթութիւն, հայկական միջավայրէ հեռացում, ակամաութիւններու վերացում, արտագաղթ ու վստահաբար այլ ենթակայական եւ առարկայական պատճառներ:

Հետեւանք սակա՞յն,

Հայապարտութեան, հայափոխութեան հայկականութեան վերացում:


Կ'արժէ մտածել այսօր այս մասին:

Ու մտածել, թէ վաղը՝ 10, 20, 30 տարի ետք ո՞վ, ո՞ւր, ո՞ր հայ թերթին մէջ կընայ կարգալ այս օրերուս հայութենէ հեռացումի ճամբան բռնած Լիբանանի հայերու մասին:

Իսկապէս կ'արժէ մտածել սքանչելի Սարաֆեան ու այլ սքանչելի ընտանիքներու անցեալին, ներկային ու ապագային մասին:

Յ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Այցելեցեք hitunes.ca կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցեք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը	Ունկնդրեցեք triktrak.ca կայքէջի հայկական համացանցային ռատիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հինգշաբթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցեք շահեկան հարցազրոյցներ
--	--

 **Այցելեցեք Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի կայքէջը՝**
www.sourphagop.org

ALINE BEKEREJIAN
NOTAIRE • NOTARY
ՆՈՏԱՐ ԱԼԻՆ ԴԵՔԵՐԵՃԵԱՆ

Achat	Առևտուր	Purchase
Hypothèque	Անշարժ Կալուածք	Mortgage
Refinancement	Վերաֆինանսավորում	Refinance
Mandat	Պատուիր	Mandate
Testament	Կտակ	Will
Succession	Կալուածք	Estate
Marriage	Ամուսնութիւն	Marriage
Procuratoin	Փոխարկողութիւն	Power of Attorney

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5
T 514.382.7222
F 514.381.1818
aline.b@notarius.net
www.abnotaires.com

Շաապուրթիւնները կը մատուցուին Արաբերէն, Ղալերէն, Ֆրանսերէն, եւ Սկոզերէն լեզուներով:

Services offerts en Arabe, Arménien, Français et Anglais
Services offered in Arabic, Armenian, French and English.

Ունկնդրեցե՛ք Գաւառայի տարածքին սփռուող հայկական ռատիոժամերը՝

ՎԱՆԳՈՒՎՐ- «Armenian Variety Show» Coop Radio 100.5 FM
Երեքշաբթի երեկոները ժամը 6:00-7:00

ԹՈՐՈՆԹՕ- «Կիլիկիոյ Ձայն» CHTO AM 1690
Կիրակի երեկոները ժամը 8:00-11:00

ՄՈՆՐԵԱԼ- «Ձայն Կեղոնի Ձայն» 105.1 FM
Երկուշաբթի երեկոները՝ ժամը 9:30-12:00
Շաբաթ առաւօտները ժամը՝ 7:30-9:30
Կիրակի առաւօտները ժամը 7:00-8:00
«Վանայ Ձայն» 1450 AM
Երկուշաբթի երեկոները ժամը 8:00-10:00

ՂԱՄԻԼԵՐ- «Ձայն Կեղոնի» ռատիոժամ CFMU 93.3 FM
Կիրակի առաւօտեան 10:00-11:00
cfmu.mcmaster.ca

ԼԱԻԱԼ

Ա. Գեորգ Հայր. Առաքելական եկեղեցի
Շաբաթ, 10 նոյեմբեր 2018

ՀՄԸՄ ԼԱԻԱԼ

ՀՄԸՄ Գանատայի Շրջանի 48-րդ Մարզական խաղեր
Լաւալ 2018
Նուիրուած ՀՄԸՄ-ի Հիմնադրութեան 100-ամեակին
31 Օգոստոսէն - Սեպտեմբեր 3, 2018

ՑԱԻԱԿՑԱԿԱՆ

ՀՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը ցուակցութիւն կը յայտ-
նէ Գէմպրիի «Մեդրի» մասնաճիւղի փոխ-ատենապետ ընկի. Անժէլ Պալմ-
եանին, իր ամուսնոյն ԱՌՆԻԿ ՊԱԼՃԵԱՆ-ի մահուան տխուր առթիւ:

ԲԱՐԻ ԱՊԱԲԻՆՈՒՄ

ՀՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը բարի ապափնում կը
մաղթէ ընկի. ՎԱՆՈՒՀԻ ԻՍԱԶԱՆԵԱՆԻՆ:

ՀՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը բարի ապափնում կը
մաղթէ ընկի. ԱՂԱԻՆԻ ԷԼՈՅԵԱՆԻՆ:

ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը իր խնդակցութիւն կը
յայտնէ ընկեր եւ ընկերուէի Յակոբ եւ Աննա Պուլկարեաններուն մանչ
թոռնիկով բախտաւորուելուն ուրախ առթիւ:

Համագրային «Սանահին» մասնաճիւղի վարչութիւնը մեծ ուրախու-
թեամբ կու գայ իր ջերմ շնորհաւորութեան մաղթանքները փոխանցելու իր
անդամներէն՝ Տէր եւ Տիկին Սեւան եւ Ալիք Արանեաններուն իրենց անդրա-
նիկ զուկին՝ Արամազդին ծնունդին առթիւ: Բարի գալուստ կը մաղթենք
Արամազդին՝ Համագրային մեծ ընտանիքին մէջ, ցանկանալով ծով երջան-
կութիւն, անամպ երկինք եւ լուսաւոր ապագայ:

«Սանահին» մասնաճիւղի վարչութիւն



ՀՈԳԵՅԱԼԳԻՍ

Գալուստ Պապեանի մահուան
առաջին տարեկիցին առիթով
հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի,

**Կիրակի, 15 Յուլիս, 2018-ին,
Սուրբ Աստուածածին Դայաստանեաց
Առաքելական Եկեղեցոյ մէջ:**

Սգակիրներ՝ Յասմիկ, Սարիկ, Վարազ Պապեան,
համայն Պապեան, Զէլէշեան,
Պարսմեան, Սերոբեան ընտանիքներ - հարազատներ:



Linda Kharaboyan Notaire
Notary

Ձեր Լուրարական և Իրաւաբանական հարցերն ու ծրագիրները վստահեցէք մեզի

Vos affaires. À cœur.

Therrien Couture

3111, boul. Saint-Martin O., #500
Laval (Québec) H7T 0K2
t. 450 682.5514 - 855 633.6326
linda.kharaboyan@therriencouture.com
therriencouture.com

VIZUALIS
optométriste

DR SHANT DONABEDIAN

Centre d'Achat Fairview · Fairview Mall
Pointe Claire

514 695 2555 · VIZUALIS.CA

PHOTO Cristal

(514) 744 4313

Berj Merdjanian

Mariage - Portrait - Graduation
Restauration - Commercial - Passeport
Publicité - Lamination - Encadrement

Video - Reproduction

647 Boul. Decarie
VSL Montreal QC
H4L 3L3

photocrystal@hotmail.com
www.photocrystal.com

Assura Bien inc.
Cabinet en assurance de dommages et de services financiers

Ապահովագրական գրասենեակ

KRIKOR ABRAKIAN **VAHAN MATOSSIAN**

970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc. H4T 1W7
T: 514.903.3999

RITA BAGHDASSARIAN
Conseillère en Sécurité Financière
Revenu Garantie Viager

COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE •
REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ •
ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE
& COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT

3820, boul. Lévesque Ouest, Bureau 101,
Laval Qc. H7V 1E8
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262
ritabagh@yahoo.com

TAXI MIRABEL
450-430-2650

Taxi Mirabel Հայկական հաստատութիւնը կարիքը ունի
20 հայ թաքսի վարորդի Միքապէլ շրջանին մէջ:
Հաճեցէք հեռաձայնել Արային (514) 979-1317 թիւին:

Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number,
besoin de chauffeur de taxi. **Call/Appelez: (514) 979 1317**

RE/MAX
RE/MAX 3000 inc.
Agence immobilière



Elie Berberian
Courtier immobilier / Real Estate Broker

C 514.519.3543
B 514.333.3000

ONGLES CAROLE HAMPARTSOUMIAN

POSE D'ONGLES
RÉSINE ET POUDRE
MANICURE & PÉDICURE AVEC GEL
RECOURVEMENT SUR ONGLES NATURELS

Առողջ եղունգներու խնամքի համար հեռաձայնել՝
514 941-0014 LAVAL.

KRIKOR MAROUNIAN RLU
Independent Financial Security Broker

Life Insurance • Disability & Critical Illness Insurance
Group Insurance • Pension Plans
Travel/Visitor Medical Insurance

11820 General Giraud
Montreal, QC H4J 2H6

Res: (514) 332-7021
Fax: (514) 332-7376
Cell: (514) 927-2666

krikormar@gmail.com

FIVE STAR ELECTRIQUE CINQ ÉTOILES

SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING
RESIDENTIAL-COMMERCIAL

BEDROS NALPATIAN

442, LA RIVIÈRE, LAVAL, QC.
TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM

CENTUM
Metropapp Wealth Solutions Inc.
License # 12147

Mortgage programs for new comers to Canada
New purchases
Refinancing
Second mortgages
Self employed
Low credit score
Access to top lenders including private lenders

416.662.6650 cell
centum.ca/sosie_demersesian

ALINE BEKEREJIAN
NOTAIRE - NOTARY

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222
F 514.381.1818

aline.b@notarius.net
www.abnotaires.com

Լուրար եւ Իրաւաբանական Խորհրդատու՝ Ալին Գեքերեճեան

horizon

HORIZON Hebdomadaire arménien Armenian Weekly
Publié par / Published by Les Publications Arméniennes (1991)
3401, Olivar-Asselin
Montréal, Québec
Canada H4J 1L5

Abonnement annuel / Yearly subscription Canada
2^e classe - 2nd class: \$80 plus applicable taxes
1^{re} classe - 1st class: \$95

États-Unis / USA
1^{re} classe - 1st class: \$95 US

Ailleurs / Elsewhere
1^{re} classe - 1st class: \$125 US

Administration / Publicité
Sylva Ehramdjian-Bachekjian (General Manager)
Tél.: (514) 332-3757
Télécopieur/Fax (514) 332-4870
E-Mail: sylvia@horizonweekly.ca
Courier de deuxième classe
/No. 40065294 / Second class mail
Dépôt légal: bibliothèques nationales du Québec et du Canada - ISSN 0708580X

Վարիչ Խմբագիր
Վահագն Գարապաշեան
Վարչական պատասխանատու՝
Սիլվա Պաշոգճեան
Քարտուղար՝ Մարինա Տէր Խաչատուրեան
Աագ խմբագիր՝ Վրէժ-Արմէն Արքիմեան
Անգլերէն/Ֆրանսերէն՝ Վիգէն Արքա-
համեան, Թինա Սիլահեան
Չեւատրում՝ Նէնսի Կիրակոսեան
Սրբագրիչ՝ Սոնա Թրիփզեան

Թորոնթոյի Ներկայացուցիչներ՝
Գրիգոր Հորոյեան, (416) 494-1921
Ժազ Վարպետեան, (416) 722-9225

Լուսանկարիչներ՝ Արմէն Ալեմեան, Մայր Թաշճեան, Իշխան Գազարեան, Վազգէն Տէկիրմէնքաչ

Financé par le gouvernement du Canada
Funded by the Government of Canada

Canada

ԱՍՏՂ ԱԳՈՒՇԱԿ



ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ) - Նոր պրպտումներ ընելով նոր յայտնություններ պիտի գտնվեք եւ նոր գաղափարներ պիտի ծագին ձեր մտքին մեջ: Բոլորը ձեր խորհուրդին պիտի դիմեն: Բախտավոր օրը երկուշաբթին է, բախտավոր թիւը՝ երկուս:

ՅՈՒԼ (21 Ապրիլին 21 Մայիս) - Կնճռոտ հարց մը վերջապես պիտի լուծուի, եւ դուք գոհունակութիւն եւ երջանկութիւն պիտի զգաք անկէ ձեր բազմատուէլնուդ համար: Հիմա հանգիստ կրնաք քնանալ: Բախտավոր օրը Հինգշաբթին է, բախտավոր թիւը՝ երեքը:

ԵՐԿՈՒՐՈՐԵԱԿ (22 Մայիսին 21 Յունիս) - Առանց մեծ դժուարութեան պիտի լուծեք կարգ մը հարցեր, որոնք երկար ատեն է ի վեր կը զբաղեցնէն ձեր միտքը: Այսպիսով պիտի կարենաք տրամադրուիլ ձեր ընտանեկան կեանքին: Բախտավոր օրը երեքշաբթին է, բախտավոր թիւը՝ տասն:

ԽԵՅՁԵՏԻՆ (22 Յունիսին 23 Յուլիս) - Գործի մեջ ձեր շուրջիններուն եւ մանաւանդ՝ գործատիրոջ վստահութիւնը կը վայելէք, հետեւաբար յարմար առիթ է հիմա, որպէսզի յաւելում մը պահանջեք, անմիջապէս պիտի կատարուի խնդրանքը: Բախտավոր օրը Կիրակին է, բախտավոր թիւը՝ եօթն:

ԱՌԻՒԾ (24 Յուլիսին 23 Օգոստոս) - Պէտք է ժամանակ տրամադրեք ձեր ընկերներուն եւ ընտանիքին, անոնք անհամբեր կը սպասեն ձեզի հետ ժամանակ անցընելու, իրենց իրաւունքն է այդ մէկը: Բախտավոր օրը Չորեքշաբթին է, բախտավոր թիւը՝ հինգը:

ԿՈՅՍ (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր) - Ձեր աշխատանքի ասպարէզը կ'ընդլայնի եւ ձեր գործերը կը բազմանան, հետեւաբար այս շրջանին շատ լարուած վիճակ մը պիտի ունենաք: Հոգ չէ, երկար պիտի չտեսնէ այս մէկը: Բախտավոր օրը Ուրբաթն է, բախտավոր թիւը՝ վեցը:

ԿԸՒՌՔ (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր) - Շատ նպաստավոր շաբաթ մըն է նոր գործառնութեան կամ վերակազմակերպուելու համար: Կը թելադրուի սակայն զգոյշ եւ զգաստ ըլլալ ձեր բոլոր քայլերուն մէջ եւ մանաւանդ՝ լաւապէս սերտել ծրագիրները: Բախտավոր օրը Կիրակին է, բախտավոր թիւը՝ ինն:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր) - Այս շաբաթ ամենէն յարմար առիթն է գործի մէջ պաշտօնի բարձրացում կամ աշխատավարձի յաւելում պահանջելու: Մի՛ վարանիք, ճիշդ ժամանակն է հիմա, օ՛ն, դէպի առաջ: Բախտավոր օրը երեքշաբթին է, բախտավոր թիւը՝ հինգը:

ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր) - Եթէ խումբի մը մեծաւորն էք, ապա անելի բարձր դիրքի հասնելու առիթը ունիք այս շաբաթ, օգտագործեցէ՛ք առիթը, սակայն մնացեք խոնարհ ու հեզ, որպէսզի մնաք սիրուած ձեր գործընկերներուն կողմէ: Բախտավոր օրը Ուրբաթն է, բախտավոր թիւը՝ երեքը:

ԱՅԾԵՂՁԻՐ (22 Դեկտեմբերին 20 Յունուար) - Բարեկամներդ իրենց գաղտնիքները քեզի կը վստահին, սակայն դու Վերջերս այնքան շատախօս եղեր ես, որ սկսած ես ուրիշին գաղտնիքները անզգալաբար դուրս տալ: Չգոյշ եղիր: Բախտավոր օրը երկուշաբթին է, բախտավոր թիւը՝ մէկը:

ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարին 19 Փետրուար) - Աշխատանքի մէջ բարեկամական նոր կապեր պիտի ունենաք նոր գործակիցներու հետ: Զաջալերելի է այս մէկը, նոր բարեկամութիւնները կը թարմացնեն ձեր հոգին: Բախտավոր օրը Չորեքշաբթին է, բախտավոր թիւը՝ ութը:

ՁՈՒԿ (20 Փետրուարին 20 Մարտ) - Պէտք է ձեւ մը գտնել ձեր վիճակը բարելաւելու, լաւ կ'ըլլայ, եթէ յարմար դասընթացքներ գտնեք եւ անոնց հետեւիք, որպէսզի կարելի ըլլայ զարգացում արձանագրել գործի մէջ: Բախտավոր օրը Շաբաթն է, բախտավոր թիւը՝ վեցը:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
Անաչիտ Նազդեանի Նաճարանի Ա. տարելիցին
Արմենակ Նազդեանի 50
Վարսենիկ Նազդեանի 50
Պայծիկ Նաճարանի 20
Շողիկ Նաճարանի, զվեր. 50
Յասմիկ Նաճարանի 100
Անդրանիկ Զարուհի, Սոնիա Երեցեաններու Հոգւոց
Ս. եւ Տ. Վերջին Փամպուքեան, զվեր., Տ. եւ Տ. Մուշեղ Փամպուքեան, զվեր., Սոնիա Փամպուքեան, ճոջանի 100
Կարու, Սոսի Գերոզեան, Սերժ, Արա, Թամար Գերոզեան, զվեր., Անդր, Նատին Գերոզեան, զվեր. 100
Րաֆֆի Պաքճեանի 2-րդ տարելիցին, Սոսի Պաքճեանի Հոգւոց
Ս. եւ Տ. Արամ Արզարեան, զվեր. 20
Մովսէս Արզարեան, ընտբ. 10
Էօժէնի Լախանեանի 3-րդ տարելիցին
Վահէ, Անի Սարգեան, զվեր. 30
Հելեն Ասատուրեանի Ա. տարելիցին
Շաբէ, Հնայեակ Ամենճեան, Հարմիկ, Քարպա Ամենճեան, զվեր., Նանի Թորոսեան, զվեր. 50
Կիւլէն Պերպլեանի մահուան առթիւ
Թագուհի Նարայանեան 20
Ս. եւ Տ. Կարապետ Մարտիրոսեան 20
Կարապետ Մովսէսեանի մահուան առթիւ
Արմէն, Պարզարա Աֆարեան 50
Աստղիկ Աֆարեան 50
Յովսէփ Թաճեան 40
Ս. եւ Տ. Սահակ Սահակեան 30
Վարդան Չափարեան 30
Ս. եւ Տ. Վերջին Աֆարեան 50
Զաւէն Աֆարեան 50
Ս. եւ Տ. Մանուէլ Աֆարեան 100
Ս. եւ Տ. Անդրանիկ Կոմարեան, զվեր. 40
Վարդան Պալասեանի 100 «Տէր Ողորմեա»ի խնդրանքով Մի ոմն 50
Ռիտի կատարման առթիւ
Բարեպաշտուհի մը 20
Լուսի ձրճրեան Սարգիսեանի 4-րդ տարելիցին
Ապան Սարգիսեան 30
Նաչիկ, Միլվա Գարբուզեան, զվեր. 25
Նայիրի Մանուկ 20
Էտմոն Պարապլեանի 7-օրեքին առթիւ
Նաչիկ, Լինտա Ղազարեան, զվեր. 50
Մոմօ, Նուէր Բուզար 50
Մինաս, Սոսէ Բերթիլեան, զվեր. 50
Ժիրայր, Զուարթ Ուղուրեան, զվեր. 100
Վահէ, Լանա Մանուկ 50
Նաչիկ, Միլվա Գարբուզեան, զվեր. 25
Ս. եւ Տ. Վարուժան Գալուստեան, զվեր. 25
Յարութ, Միլիկ Պրամեան 25
Ս. եւ Տ. Անդրանիկ Գրիգորեան 10
Ս. եւ Տ. Բնարթ Ուղուրեան 100
Նայիրի Մանուկ 20
Սերոբ, Թամար Գարաբեան, զվեր. 25
Փանոս, Նուրի Ապրաբեան, զվեր. 20
Վերջին, Անի Ապրաբեան, զվեր. 20
Մարի Ապրաբեան 20
Լորի Ապրաբեան 20
Գոգո, Անի Թիֆֆեանեան, զվեր. 20
Ս. եւ Տ. Սեակ Ղազարեան, դստերբ 25
Նազան Ոսկերչեան Պէտլեքսիմեանի 2-րդ տարելիցին
Թորեկ, Անաչիտ Գուլումճեան, զվեր. 100
Մուրատ, Անաչիտ Տէմիրոսկէն 50
Ս. եւ Տ. Հայկազ Բարախեան, Սելիկ Գուլումճեան, զվեր. 100
Ջորճ Թէրլեանի 40-ին Պաղտոյանի ընտբ. 20
Ս. եւ Տ. Ջարեհ Գարակէօզեան, զվեր. 20
Ս. եւ Տ. Պողոս Նահապետեան, զվեր. 20
Ս. եւ Տ. Աւետիս Նահապետեան 20
Ալին Կիլիսեան 20
Ս. եւ Տ. Փոյ Նահապետեան, զվեր. 30
Ս. եւ Տ. Յակոբ Մարի Եղանեան, զվեր. 20
Անաչիտ Էմիրեան Սիլիքեան 20
Ս. եւ Տ. Գէորգ Գուլումճեան, զվեր. 10
Ս. եւ Տ. Մանուէլ Սուլաշեան, զվեր. 20
Վարուժան Հայրապետեանի 8-րդ տարելիցին
Սոսէ Հայրապետեան, դստերբ՝ Վանա, Միրնա 40
Ժողէֆ, Սեդա Օհանէսեան 25
Արմէն, Մովսէլ Օհանէսեան, զվեր. 25
Ս. եւ Տ. Փոյ Հայրապետեան, զվեր. 30
Արմէն Սիմոնեան 20
Ս. եւ Տ. Պետրոս Հայրապետեան 30
Գէորգ, Շողիկ Բէտեան 20
Յարութիւն Պժեանի 11-րդ տարելիցին
Ֆլորա Պժեան,

Ս. եւ Տ. Գէորգ Պժեան, դուստր, Ս. եւ Տ. Գրիգոր Պժեան, զվեր. 50
Պետրոս Աղաճանեանի 8-րդ տարելիցին
Միրուհի Աղաճանեան 1000
Մատլէն Թարրիզեան 50
Կարո Տոնապետեանի 13-րդ տարելիցին,
Յակոբ Թէֆեճեանի Հոգւոց, Տոնապետեան, Մաժուլեան, Հինտոյեան Գերգաստանաց Ննջեցիլոց
Տոնապետեան ընտբ., Մարի Պալեան, զվեր., Լորան Հինտոյեան, զվեր. 60
Սարգիս Թորոսեանի, Յակոբ, Արմաիր Պարապլեանի, Սուրէն Ջիւրեանի Հոգւոց
Իտա Թորոսեան, զվեր. 100
Էմանուէլ, Նանսի, Ճէսիքա, Էմիլի Մարկոսեան 50
Մարի Գարայճեանի 2-րդ տարելիցին
Սոնա Եսփոճեան 100
Նուպար Օհանէսեանի 9-րդ տարելիցին
Մարի Օհանէսեան 50
Ս. եւ Տ. Միսաք Օհանէսեան, զվեր. 40
Վազգէն, Արմիկ Ասատուրեան, զվեր. 50
Ուոլթեր, Հայկուշ Ասատուրեան, զվեր. 50
Սարգիս, Երանուհի Մաժուլեանի, Պարտապար Պալեանի, Կարո Տոնապետեանի Հոգւոց
Նուպար, Այտա Մաժուլեան, զվեր. 20
Էլլին Տէմիրճեանի մահուան առթիւ
Սիրվարդ Շայն 50
Ս. եւ Տ. Կարպիս Գալաստաբաբեան 50
Ս. եւ Տ. Գէորգ Մանկելեան 100
Տիգրանուհի Եփրեմեան 50
Ժողիկ Պասանճեան 100
Ֆրիկ, Ասդրիտ Գալուրեան, ընտբ. 100
Իտա Գանունեան 50
Մարի Կարիսեան 50
Բժ. եւ Տիկ. Ժիրայր Պասանճեան, զվեր. 100
Ս. եւ Տ. Շուարշ Իսթանպուլեան 50
Երուանդ, Զեփիւս Կարապետեան 50
Տիանա Հաճէթեան 250
Ալյէր Արզիլեանեան 50
Ս. եւ Տ. Ստեփան Էլոյեան 50


Աղանի Բէտեան 25
Ս. եւ Տ. Նուպար Պասանճեան 200
Վահէ, Վիլի Թաճեան 100
Հայկանուշ Պաթմանեան 50
Թագուհի Մահարեան Փեթրոսեան 50
Ալին Մառէթեան 50
Ս. եւ Տ. Սեակ Իսթանպուլեան 100
Արաքսի Զորայեան 50
Ալին Ետայեան 50
Ս. եւ Տ. Յարէթ Թիթիսեան 100
Հեթմիկ Գալուրեան 30
Պողոս Պաշտուրեան 25
Լիսի Պաշտուրեան 25
Քժ. եւ Տիկ. Վազգէն Տէր Ղազարեան 50
Ս. եւ Տ. Կարապետ Գալեմճեան 100
Ս. եւ Տ. Արթուր Կանին Գալաստաբաբեան 50
Ս. Գէորգ Եկեղեցեան, ԼԱԻԱԱ Ողբ. ՆՈՒՐԱԳ ԿԵՏԻԿԵԱՆԻ յիշատակին:
Ս.Տ. Ռաֆֆի ժազեան ընտանիք 500
Տիկ. Շամիրամ ժազեան 50
Ողբ. ՍԻՐՈՒՆ ԱԽԱԳԵԱՆԻ մահուան 7-օրեքին առթիւ:
Տիգր Ջո Ասադեան եւ Սոնա Տէլիքմեան 100
Ս.Տ. Տիգրան, Լիլա Վահրամեան 25
Ս.Տ. Ժան, Շողիկ Ղուսուպի 20
Ս.Տ. Վարդիվառ, Նորա Փոշոյեան 20
Ս.Տ. Լուսին, Յասմիկ Պաշտուրեան եւ դուստր 30
Ս.Տ. Փաղարեան եւ Աւս Մալխասեան 40
Ս.Տ. Հրաչ Գարայեան 20
Սիրվարդ Շայն 20
Ողբ. ՄԿՐՏՈՒ ԵՎ ՄԱՐԻ ՔԵՆՏՏՐԻՃԵԱՆՆԵՐՈՒ, ԵՄՍԻՆՆԵՐՈՒ ԵՎ ՎԱՀԷ ՀԵՆՍԵԱՆԵՐՈՒ
Ս.Տ. Սարգիս Քենտրեմեան ընտանիք, Տիկ. Մարի Հենեան, Ս.Տ. Վահէ Փորտեան ընտանիք 40
Ողբ. ՊՈՂՈՍ ԵՎ ՀԵՐՄԻՆԷ ԶՕՊՈՒՑԵԱՆՆԵՐՈՒ, ԵՂԻԱ ԵՎ ՆՈՒՐԱԳ ՄԱՆԿԻԵԱՆԵՐՈՒ
Ս. եւ Տ. Շուարշ Իսթանպուլեան 50
ԶՕՊՈՒՑԵԱՆ, ՄԱՆԿԻԵԱՆ, ԱՐԱՐԱԿԻՐԵԱՆ ԵՎ ՅԱԿՈՒՐԵԱՆ ընտանիքներու ննջեցեանի յիշատակին:

Տիկ. Թագուհի Մանկեան 20
Ողբ. ՍԱՐԳԻՍ ԵՎ ԳՐԱՆՏԱ ՓԱՆՈՍԵԱՆՆԵՐՈՒ ԵՎ Համայն ՓԱՆՈՍԵԱՆ ԵՎ ԱՐԱՆՏԱՄԵԱՆ ընտանիքներու ննջեցեաններու յիշատակին:
Ս.Տ. Վարդիվառ, Արփի Փանոսեան եւ Շանթ 40
Ս.Տ. Մովսէս, Վանոս Բէտեան եւ զվեր. 30
Ս.Տ. Մկրտիչ, Էլիզապէթ Շիրինեան 30
Ս.Տ. Սարգիս, Մանան Ապրաբեան 25
Ողբ. ԱՆԳՐԱՆԻԿ ՊՐԷՄՃԵԱՆԻ մահուան 14-րդ եւ ՍԻՐԱՆՈՅՇ ՊՐԷՄՃԵԱՆԻ մահուան 4-րդ տարելիցներուն առթիւ:
Ս.Տ. Տիգրան, Վանոս Բէտեան եւ զվեր. 40
Ողբ. ՅԱԿՈՒՐ ԶԱՆՃԻԿԵԱՆԻ մահուան 19-րդ տարելիցին առթիւ:
Տիկ. Վարսենիկ Ճանճիկեան եւ ընտանիք 40
Տիկ. Վարդուհի Վահրամեան բարի ապաքինման Համար Տէր Ողորմեա 20
Ողբ. ԴԱԻԻԹ ՏԵՅՐՄԷՆՃԵԱՆԻ մահուան 14-րդ տարելիցին առթիւ:
Ս.Տ. Վերջին, Միլիկ Գալաստաբաբեան 50
Ողբ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՕՓՈՒՅԵԱՆԻ յիշատակին:
Տիկ. Տիգրանուհի Թօփուղեան եւ զվեր. 20
Ողբ. ՄԱՐՏԻՐՈՍ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ, ՊԵՏՐՈՍ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ, ԱՐԱՐԱՍ ԳԵՏՐՈՍԵԱՆԻ ԵՎ ՍԱՐԳԻՍ ԱԳԱՄԵԱՆԻ յիշատակին:
Տիկ. Վարդուհի Պետրոսեան եւ Մարտիկ 20
Ս.Տ. Վահէ, Սոսի Պերպլեան 20
Ողբ. ՊԵՏՐՈՍ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ յիշատակին:
Տիկ. Լուսին Պետրոսեան եւ զվեր. 20
Ողբ. ՄԵՍՐՈՒՍ ԱՊՈՑԵԱՆԻ ԵՎ ՄԱՐԻ ՄԱՀՏԵԱՆԻ յիշատակին:
Տիկ. Մարիա Ապրիլեան, Սոսի եւ Անի 40
Ողբ. ՇՆՈՐՀԻԿ ԱՍՏՈՅԵԱՆԻ յիշատակին:
Ս.Տ. Իշխան, Էլի Լատոյեան 40
Բարեպաշտ մը ուխտի առթիւ 50

ԿԻԼԻԿԻՈՅ... Սկիզբը էջ 7

Մայրաքաղաքը գրաւուած էր անոնց կողմէ եւ բաժնուած երեքի: Իթիֆհատական նախարարները եւ իշխանաւորները երկրէն փախած էին կամ թաքնուած: Սուլթանը նոր նախարարներ նշանակած էր եւ կը սպասէր «երկիրին ճակատագիրը ճշտող որոշումներու»⁵¹⁵: Ահա այն ատեն, Կ. Պոլսոյ հայութիւնը անմիջապէս ձեռնարկած էր «մեռած Պատրիարքարանը կենդանացնելու»⁵¹⁶: Սահակ Կաթողիկոսի հրամանով, փոխանորդ Գաբրիէլ Եպս. ձեվահիւրեանը դիմած էր կառավարութեան, եւ դադարեցուած Ազգային Սահմանադրութեան վերահաստատումը խնդրած: 19 Հոկտեմբերին վերահաստատուած էր Ազգային Սահմանադրութիւնը: Տեղապահ ընտրուած էր Մեսրոպ Եպս. Նարոյեան, որ իր կարգին դիմելով Բարձրագոյն Դուռ, աքտորեալ Պատրիարքին վերադարձը խնդրած⁵¹⁷: Զաւէն Պատրիարք Մուսուլէյն վերադարձած էր եւ դարձեալ ստանձնած պաշտօնը: Երուսաղէմի Պատրիարքութեան պարագային՝ աքտորական Պատրիարք չկար: 1910-ին, Յարութիւն Պոր. Վեհապետեանի վախճանումէն յետոյ՝ Աթոռը թափուր մնացած էր մինչեւ Սահակ Կաթողիկոսի պաշտօնավարութիւնը այնտեղ: Իսկ անոր մեկնումէն ետք, կարգադրութիւններ՝ Պատրիարքի ընտրութիւնը պիտի յետաձգէին 5 Սեպտեմբեր 1921-ին: Եւ երուսաղէմի Աթոռին պիտի բարձրանար Եղիշէ Պոր. Դուրեան:

ԱՂԲԻՒՐՆԵՐ ԵՎ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ
807.- ԿՊԿ, ս 954:
808.- Յետ ստակալի եւ դժոխային կռիւներու, 9 Դեկտեմբերին Օսմանցիները պաշտօնապէս յանձնած էին Երուսաղէմը, եւ չորս հարիւր տարիներու «անարդ ու բռնատիրական լուծը» թօթափուած էր քաղաքին վրայէն: Մէկ օր առաջ, քաղաքին ամէն կողմը փակցուած էին Անգլիացի զօրավար Էտմընտ Ալլէնպիի յայտարարութեան պատճէնները, որոնց վրայ գրուած էր. «Այսօրուքնէ քաղաքը անգլիական վարչութեան տակ մտած է. կրօնական հաստատութիւնները եւ իրաւունքները պիտի յարգուին», Զաւէն Ա. Քէնյ. Արզումանեան, Ազգապատում, Դ. Հտ, Ա. Գիրք, յօդ. 3277, էջ 194, 195: Ա ԴԱ:
809.- Գիւտ Եպիսկոպոս, Երուսաղէմի Հայոց Վիճակը, Արեւ, 16 Յունուար, 1918, էջ 1:
810.- ԿՊԿ, ս 956:
811.- Օրմանեան արքեպիսկոպոս իր «Խոհք եւ Խօսք»ին մէջ նշած է, թէ ըստ իր լաստին, այն օրերուն Դամասկոսի հայութեան թիւը տասը հազար էր, իսկ բնիկ հայերուն թիւը չորս հարիւր իսկ չէր հասներ: Գրած է. «Այստեղ հաւաքուած հայերուն մէկ մասը ինքզինքնին սպրեկնելու կարողներ էին, իբր կէս մասը առեւտուրներու եւ արհեստներու եւ պաշտօնէութեանց մէջ մտնողներ էին, որ ինքզինքնին եւ իրենցները անօթի չձգելու չափ միջոց կը ճարէին, իսկ բոլորովին լքեալներ, անոնք այլիներ, անտիրական որբեր այլիանոցի եւ որբանոցի մէջ հաւաքուած էին, մէջտեղ մնացողներն այլ պզգային աղքատախնամի մը նպաստներէն կ'օգտուէին: Գէջ աղէկ տանելի եւ ուրիշ տեղերու հետ բաղդատամբ լաւագոյն վիճակ ունէր դամասկոսեան հայ տարագիրը մինչեւ (1918-ի) Փետրուար ամիսը», Օտիս, էջ 352-353: Անկէ ետք՝ զինուորական եւ ապստամբական կացութիւնը եւ այլ պատճառներ Դամասկոսի ընդհանուր կեանքը ցնցեցին, եւ ալ ոչ ոք իր պարագաներուն համար օրապահիկ կրնար ապահովել եւ ոչ ոք իրեն սնունդ կրնար գտնել, ն, էջ 353, 354:
812.- ԿՊԿ, սս 957-958:
813.- Ն, ս 959:
814.- Ն, ս 960:
815.- ԶՊՅ, էջ 277:
816.- Անդ:
817.- Ն, էջ 277-278:

 Այցելեցէ՛ք Թորոնթոյի ամենօրեայ վարժարանի բարեկարգուած կայքէջը՝ / Visit our new website
www.arsarmenianschool.ca



ardziv

արձիվ



Յուլիս 2018

Սիրելի՛ հայրենակիցներ,

Այս տարի համայն հայութիւնը, հայրենիքի մէջ թէ սփիւռքի, կը նշէ հայ ազգի պատմութեան ամենէն նշանակալի եւ փառապանծ ժամանակաշրջաններէն մէկուն՝ Հայաստանի Ա. Հանրապետութեան 100-ամեակը:

Իսկապէ՛ս հրաշալի օրեր էին: Ազգ մը, որ անկարելին կարելի դարձուց եւ բազէի նման դժոխային կրակէն՝ ցեղասպանութենէն, սլացաւ դէպի միասնականութիւն, դէպի պայքար եւ դէպի ազատ ու անկախ հայրենիք:

Ինչպէ՛ս չհպարտանալ մեր ազգով:


Այս ազգին զաւակներն էին Արամը, Դրօն, Նժդեհը, Զաքարիաներն եւ Նոյնանման անմահ հերոսներ, որոնք դարերու մեր երազը իրականացուցին, այսօրուան Հայաստանի հիմը դրին եւ հայ ժողովուրդին հինաւուրց հաւատքը վերակենդանացուցին:

Նոյն հաւատքով ոգեշնչուեցան Արցախի մեր ազատամարտիկները եւ անգամ մը եւս մեր պատմութեան էջերը զարդարեցին Նորանոր պանծալի յաղթանակներով:

Մինչ օրս, հայրենիքէն դուրս, սփիւռքի փերուն, ՀՀԴ ԳԵՄ-ը այդ հաւատքը վառ կը պահէ գանատահայ գաղութին մէջ, նուիրեալ ու կամաւոր հայ երիտասարդին օրինակ հանդիսանալով:

Առ այդ, սիրելի՛ հայ երիտասարդ, միացի՛ր ՀՀԴ ԳԵՄ-ի շարքերուն, ուս-ուսի տուած ծառայե՛նք Հայ Յեղափոխական Դաշնակցութեան դրօշին տակ, շարունակե՛նք մեր հերոսներուն արեան գնով կերտած սուրբ եւ անբիծ պայքարը՝ դէպի Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստան:

ՀՀԴ ԳԵՄ-ի Կերրոնական Վարչութիւն



AYF Canada Youth Corps
Camp Vanadzor

DONATE TODAY!

donate.ayfcanada.org

Send us an email or give us a call for more information:

youthcorps@ayfcanada.org
647-966-2281





BARRY



KAREN



GARO

KAZANDJIAN



514
333-3000

DEMANDEZ UNE ÉVALUATION GRATUITE

4020, Av. de la Paix

À VENDRE 399 000 \$

11960 Av. du Beau-Bols

À VENDRE 1 475 000\$ ou 5 500\$/mois

12280 Av. Antoine-Berthelet

À VENDRE 1 395 000 \$

11485, Frigon

À VENDRE 698 000 \$

12161, Guertin

À VENDRE 519 000 \$

1693-1695 de Salaberry

À VENDRE 798 000 \$

12212, Av. Martin

À VENDRE 1 495 000 \$

Av. Beau-Bols

À VENDRE 798 000 \$

9, Pl. de Domèvre

À VENDRE 439 000 \$

2080, Ch. Hanover

À VENDRE 1 995 000 \$

4025, du Havre

À VENDRE 498 000 \$

375, Ch. Bas-Ste-Thérèse

À VENDRE 525 000 \$

204, Ch. Bord-de-l'eau

À VENDRE 369 999 \$

4500, des Cageux app.1001

À VENDRE 339 000 \$

83, des Roseaux

À VENDRE 1 198 000 \$

EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

CLASSÉS PARMIS LES MEILLEURS COURTIER RE/MAX AU MONDE
RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS IN THE WORLD

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC, H4N 3C5